Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի ղեկավարի
2025թ. փետրվարի 10-ի N 8-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք. Երևան, 0009, Կորյուն փողոց 15, կայք՝ http://www.ecoinspect.am/
☎ հեռ. (015) 48-48-48, էլ. փոստ՝ info@ecoinspect.gov.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ 7

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 7

Աղյուսակ 1 8

Աղյուսակ 2 9

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 9

Աղյուսակ 3 10

2024 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ 2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ 13

Աղյուսակ 4 14

Գծապատկեր 1 15

Աղյուսակ 5 15

Գծապատկեր 2 16

Աղյուսակ 6 16

Աղյուսակ 7 17

Աղյուսակ 8 18

Գծապատկեր 3 18

Աղյուսակ 9 19

Աղյուսակ 10 20

Գծապատկեր 4 20

ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 21

Աղյուսակ 11 21

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐ 21

ԲԸՏՄ վարչական ակտերով սահմանված տուգանքներից պետական բյուջեի թիվ 900005024063 հաշվեհամարին կատարված վճարումների համեմատականը 22

Աղյուսակ 12 22

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ, ՔԱՆԱԿԸ, ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ՀԻՄՔԵՐԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 22

399 հանձնարարագրով փնտրեսավարող սուբյեկտների փնտրեսական գործունեության ոլորտները 23

Աղյուսակ 13 24

Գծապատկեր 5 24
Աղյուսակ 14 25
Ստուգումների շրջանակը 25
Աղյուսակ 15 26
Աղյուսակ 16 26
2024 թվականի արտածրագրային 219 ստուգումից 26
Աղյուսակ 17 27
219 հանձնարարագրերի հրապարակման հիմքերը 27
Աղյուսակ 18 28
Աղյուսակ 19 29
ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ 29
Աղյուսակ 20 30
2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԸՏՄ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 30
Աղյուսակ 21 31
1. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 31
1.1. Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն 31
Իրականացված ստուգումներ 32
Իրականացված վարչական վարույթներ 34
Տավուշի մարզ 35
Լոռու մարզ 35
Կոտայքի մարզ 36
Արագածոտնի մարզ 36
Վայոց ձորի մարզ 36
Գեղարքունիքի մարզ 36
Սյունիքի մարզ 37
Առավել հաճախ արձանագրված խախտումները 37
Իրականացված վերահսկողական գործառույթներ 37
Իրականացված կանխարգելիչ միջոցառումներ 39
Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն 41
Աղյուսակ 22 41
Աղյուսակ 23 42

1.2. Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն ... 42
Իրականացված կանխարգելիչ գործողություններ ... 42
Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն ... 43
Աղյուսակ 24 ... 43
Սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացված միջոցառումներ ... 43
Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ ... 44
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ... 45
2. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ, ՋՐԵՐԻ, ՀՈՂԵՐԻ, ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ... 46
2.1. Մթնոլորտային օդի պահպանություն ... 46
Իրականացված ստուգումներ ... 46
Իրականացված վարչական վարույթներ ... 46
Իրականացված վերահսկողական գործառույթներ ... 47
Երևան քաղաքում իրականացված վերահսկողության արդյունքներ ... 47
Իրականացված կանխարգելիչ գործողություններ ... 48
Առավել հաճախ արձանագրված խախտումները ... 49
Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ ... 49
2.2. Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն ... 52
Իրականացված ստուգումներ ... 52
Իրականացված վարչական վարույթներ ... 54
Իրականացված վերահսկողական գործառույթներ ... 55
Առավել հաճախ արձանագրված խախտումները ... 56
Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ ... 56
2.3. Հողերի օգտագործում և պահպանություն, վտանգավոր նյութեր, արտադրություն ու սպառման թափոններ ... 56
Իրականացված ստուգումներ ... 56
Իրականացված վերահսկողական գործառույթներ ... 57
Առավել հաճախ արձանագրված խախտումներ ... 58
Իրականացված կանխարգելիչ միջոցառումներ ... 58
Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ ... 58
2.4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն ... 59
3. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ... 59
Իրականացված ստուգումներ ... 60

3.1. Ընդերքի շահագործման վերահսկողություն 60

3.2. Հանքային ջրերի և երկրաբանական ուսումնասիրությունների վերահսկողություն 61

Հայտնաբերված ոչ մետաղական օգտակար հանածոյի ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի վերաբերյալ 61

Աղյուսակ 25 62

Աղյուսակ 26 63

Աղյուսակ 27 64

Աղյուսակ 28 64

Աղյուսակ 29 64

Աղյուսակ 30 65

Աղյուսակ 31 65

Աղյուսակ 32 65

Աղյուսակ 33 66

Աղյուսակ 34 66

Աղյուսակ 35 66

Աղյուսակ 36 66

Աղյուսակ 37 67

Արաքսի ավազանում իրականացված միջոցառումներ 67

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողություններ 68

Առավել հաճախ արձանագրված խախտումները 69

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ 70

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 71

Կատարված հետազոտությունները՝ ըստ 2022-2024 թվականների համեմատականի 72

Աղյուսակ 38 72

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 72

Աղյուսակ 39 72

Աղյուսակ 40 77

Աղյուսակ 41 77

Աղյուսակ 42 77

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀՀ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 78

Լաբորատոր հագեցվածության ապահովում 78

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 79

ԲԸՏՄ կարիքների համար օրենքով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում՝ 21,179,600 ՀՀ դրամ արժողությամբ ձեռք է բերվել հետևյալ ապրանքները. 82

Աղյուսակ 43 82

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 83

Աղյուսակ 44 83

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ 84

Աղյուսակ 45 84

ԲԸՏՄ դեմ ներկայացված հայցադիմումների, դրանց վերաբերյալ պատասխանների, ԲԸՏՄ կողմից ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, ԲԸՏՄ մասնակցությամբ ընթացքի մեջ գտնվող և ավարտված դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն 89

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Խորհուրդ	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդ
Գրասենյակ	Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
ԲԸՏՄ	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
Հաշվետվություն	Տեսչական մարմնի տարեկան հաշվետվություն
ՋՄՀԹՎՆՎՎ	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն
ԸՎՎ	Ընդերքի վերահսկողության վարչություն
ԿՎՎ	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն
ՌԳՎՎ	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն
ԻԱՓՎ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ԻՀՀՏԱԲ	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
ԼՀԲ	Լաբորատոր հետազոտությունների բաժին
ՏԲ	Տարածքային բաժին
ՍԹԱ	Սահմանային թույլատրելի արտանետում
Ծրագիր	Տարեկան գործունեության ծրագիր
ՕՊՕ	Օդի պահանջվող օգտագործում
ՋՕԸ	Ջրօգտագործողների ընկերություն

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն Հաշվետվությունը ներկայացվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշմամբ հաստատված ԲԸՏՄ կանոնադրության պահանջների:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ԲԸՏՄ իրականացրել է ստուգումներ (այդ թվում նաև՝ առաձնահատուկ ստուգումներ), դիտարկումներ և վարչական վարույթներ՝ կիրառելով պատասխանատվության միջոցներ բնապահպանության ու ընդերքի ոլորտներում, ձեռնարկել է միջոցներ վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման հետևյալ ուղղություններով՝

- մթնոլորտային օդի պահպանություն
- ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն
- հողերի օգտագործում և պահպանություն
- ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն
- կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն
- վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ
- պետական փորձաքննություն
- բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ
- վիճակագրական հաշվետվություններ

ԲԸՏՄ նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը:

ԲԸՏՄ խնդիրներն են՝

- բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը.

- շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ ԲԸՏՄ համար սահմանվել է թվով 194 հաստիք, որից ներկայումս 38-ը՝ թափուր:

ԲԸՏՄ լիազորությունների իրականացման նպատակով 2024 թվականի կտրվածքով իրականացվել է 1,162,801.4 ՀՀ դրամի բյուջետային հատկացում՝ կատարողականը կազմում է 99,4%: Նախորդ երկու տարիների կտրվածքով ՀՀ պետական բյուջեի հատկացումները ներկայացված են *Աղյուսակ 1-ում*:

Աղյուսակ 1

ԲԸՏՄ 2024 թվականի բյուջեի համեմատականը նախորդ երկու տարիների հետ			
Հոդվածի անվանումը	*2022*	*2023*	*2024*
	հազար ՀՀ դրամ	*հազար ՀՀ դրամ*	*հազար ՀՀ դրամ*
Ընդամենը՝ ԲԸՏՄ, այդ թվում՝	919,632.2	1,119,258.4	1,162,801. 1
Ընթացիկ	916,632.2	1,061,128.4	1,104,671.1
Կապիտալ	3,000.0	58,130.0	58,130.0

2022 թվականի կատարողականը կազմում է 95,5%, իսկ 2023 թվականի կատարողականը կազմում է 99,3%:

2024 թվականի բյուջեով հաստատված հիմնական աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատականը փաստացի վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատությունը ներկայացված են *Աղյուսակ 2-ում*:

Աղյուսակ 2

2024 թվականի բյուջեով հաստատված հիմնական աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատականը փաստացի վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատությունը			
Քաղաքացիական ծառայության պաշտոններ	*Սահմանված միջին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների չափը*	*Վճարված միջին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների չափը*	*Սահմանված և վճարված միջին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների տոկոսային տարբերությունը*
Ղ-3	532,746.2	647,023.1	21.5
Ղ-4	439,129.6	538,446.4	22.6
Մ-2	362,885.1	377,236.1	4.0
Մ-3	300,152.3	373,951.0	24.6
Մ-4	226,803.2	253,024.9	11.6
Մ-6	189,163.5	223,584.5	18.2

ԲԸՏՄ- 2024 թվականի բյուջեով հաստատված *«Աշխատավարձեր և հավելավճարներ, պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ»* հոդվածներով խնայված *(թափուր հաստիքներ)* գումարները բաշխվել են աշխատակիցներին՝ աշխատանքային պարտականությունները բարեխիղճ և պատշաճ կատարելու համար:

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարեկան գործունեությունն իրականացվել է՝ առաջնորդվելով Խորհրդի կողմից 2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 07-Լ որոշումով հաստատված 2024 թվականի տարեկան գործունեության ծրագրով:

2024 թվականի 14 միջոցառումների կատարման վերաբերյալ ներկայացվում է *Աղյուսակ 3-ում*:

Աղյուսակ 3

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ընթացքը
1	*2*	*3*	*4*
1	Մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների գործածության, սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ոլորտային ուղղություններում ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 41 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	Հրապարակվել է 180 հանձնարարագիր, որից 3-ը ուժը կորցրած է ճանաչվել
		թվով 49 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
		թվով 47 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
		թվով 43 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
2	Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումներ	Սիգ տեսակի ձկան վերարտադրության ապահովում և կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	իրականացվել է ՇՄ, ՆԳՆ, Գեղարքունիքի մարզպետարանի հետ համատեղ
3	Կենդանիների վերարտադրության և որսի թույլտվության ժամանակահատվածում ապօրինի որսորդության դեմ անցկացվող միջոցառումներ	Կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	Իրականացվել է ԲԸՏՄ ղեկավարի հրամաններով
4	Հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման միջոցառումներ	Հողի բերրի շերտի ապօրինի օգտագործման կանխարգելում	Իրականացվել է ԲԸՏՄ ղեկավարի հրամաններով

5	Ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման միջոցառումներ	Տեղափոխվող փայտանյութի ապօրինի օգտագործման կանխարգելում	Իրականացվել է ԲԸՏՄ ղեկավարի հրամաններով
6	Մթնոլորտային օդի պահպանության վերահսկողության ուղղված կանխարգելիչ միջոցառումներ	Բեռնատար ավտոմեքենաների անթափանց ծածկոցների բացակայության հայտնաբերում և տեղափոխվող սորուն նյութերի շրջակա միջավար թափվելու կանխարգելում, շինարարական հրապարակից դուրս փոշու արտանետումների տարածման կանխարգելելում	Իրականացվել է ԲԸՏՄ ղեկավարի հրամաններով
7	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ԲԸՏՄ անձնակազմին անօդաչու թռչող սարքերի կիրառման համար անհրաժեշտ ծրագրերի (մարկշեյդերական չափագրումների) և վերլուծական գործիքների ուսուցում	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	Իրականացվել է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համայսարան» հիմնադրամի հետ համատեղ
8	ՀՀ կառավարության 2019 թվականի N 1423-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ
9	«Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի ներկայացում Գրասենյակ	Թափոնների պահման ժամկետների հստակեցում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ

10	ՀՀ կառավարության 2003 թվականի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներից ջրառի իրականացման համար վնասի հաշվարկման գործընթացի վերանայում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ
11	«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ
12	«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ
13	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ
14	ԲԸՏՄ պետական տեսուչների վերապատրաստման դասընթացներ	ԲԸՏՄ աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացում	Իրականացվել է ՆԳՆ կրթահամալիրի հետ համատեղ

Համաձայն 2024 թվականի տարեկան գործունեության ծրագրի նպատակների՝ ԲԸՏՄ օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացվել է բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարում և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև իրականացված

վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելման կամ նվազեցման համար:

Վերոնշյալ նպատակների իրագործման առնչությամբ իրականացվել են վերահսկողական գործառույթներ (ստուգումներ (այդ թվում առանձնահատուկ ստուգումներ), դիտարկումներ և վարչական վարույթներ), ինչպես նաև կանխարգելիչ, իրազեկման և խորհրդատվական միջոցառումներ:

2024 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ 2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրականացված վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթների արդյունքում արձանագրվել է ընդհանուր 2,536 իրավախախտում, որը 2023 թվականի համեմատությամբ նվազել է 0,3%, իսկ 2022 թվականի համեմատությամբ աճել է 6,0%:

Վերահսկողության ուղղություններով նախորդ երկու տարիների իրավախախտումների համեմատականով արձանագրվել են առավել բարձր ռիսկային ուղղություններ, որոնց քանակական և տոկոսային արտահայտումը ներկայացված է *Աղյուսակ 4-ում*:

Աղյուսակ 4

Հայտնաբերված իրավախախտումների թվի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների							
h/h	***Ուղղությունները***	***2022***		***2023***		***2024***	
		քանակ	*%*	*քանակ*	*%*	*քանակ*	*%*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	755	31.6	869	34.2	782	30.8
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	142	5.9	155	6.1	134	5.3
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	179	7.5	329	12.9	397	15.7
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	99	4.1	161	6.3	160	6.3
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	281	11.7	199	7.8	148	5.8
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	108	4.5	130	5.1	180	7.1
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	487	20.4	175	6.9	134	5.3
8	**Վիճակագրական հաշվետվություններ**	279	11.7	473	18.6	520	20.5
9	**Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)**	46	1.9	42	1.7	67	2.6
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	17	0.7	11	0.4	14	0.6
ԸՆԴԱՄԵՆԸ		**2393**	**100**	**2544**	**100**	**2536**	**100**

Բուսական+կենդանական, մթնոլորտ, ջրային, թափոն+հող, ընդերք, այլ (վիճ+շմագ+հանձն)

Գծապատկեր 1



Վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրված իրավախախտումների հիմքով հարուցվել է 1,645 վարչական վարույթ, որից 291-ը միայն ստուգումներով: Վարչական վարույթները հարուցվել են ԲԸՏՄ նախաձեռնությամբ, ՀՀ վարչապետի հանձնարարականների, Պետական եկամուտների կոմիտեի, Տեղական ինքնակառավարման, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների, ահազանգերի և այլ հիմքերով: ԲԸՏՄ կողմից վարչական վարույթների քանակը նախորդ երկու տարվա համեմատականով ներկայացված է *Աղյուսակ 5-ում*:

Աղյուսակ 5

Ժամանակահատվածը	**Հարուցված վարչական վարույթների**	
	քանակը	***որից՝ ստուգումներով***
2022	930	241
2023	1,352	211
2024	1,645	291

Համաձայն այդ տվյալների 2024 թվականին հարուցված ընդհանուր վարչական վարույթների թիվը 2023 թվականի համեմատությամբ աճել է 21,7%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝

76,9%, իսկ միայն ստուգումներով վարչական վարույթների թիվը 2023 թվականի համեմատությամբ աճել է 37,9%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 20,7%:

Գծապատկեր 2



Հարուցված վարչական վարույթների արդյունքում վարչական տույժի են ենթարկվել 992 անձ, որոնց նկատմամբ կիրառվել է թվով 1,346 վարչական տույժ: Նախորդ երկու տարվա համեմատականը կիրառված տույժերի քանակի և վերահսկողական ուղղությունների առնչությամբ ներկայացված է *Աղյուսակ 6-ում և Աղյուսակ 7-ում*:

Աղյուսակ 6

Ժամանակահատվածը	Վարչական տույժի են ենթարկվել անձանց քանակ
2022	749
2023	872
2024	992

Համաձայն այդ տվյալների 2024 թվականին կիրառված վարչական տույժերի թիվը 2023 թվականի համեմատությամբ աճել է 13,8 %, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 32,4 %:

Աղյուսակ 7

ԲԸՏՄ կողմից կիրառված վարչական տույժերի քանակի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	**ՈՒղղությունները**	**2022**	**2023**	**2024**
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	218	208	212
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	28	42	81
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	154	216	291
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	80	112	128
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	87	99	92
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	63	73	102
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	86	51	58
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	253	258	325
9	**Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)**	40	47	51
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	13	10	6
ԸՆԴԱՄԵՆԸ		**1,022**	**1,116**	**1,346**

Համաձայն այդ տվյալների 2024 թվականին կիրառված վարչական տույժերի թիվը 2023 թվականի համեմատությամբ աճել է 20,6 %, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 31,7 %:

Հարուցված վարչական վարույթների արդյունքում նշանակված վարչական տուգանքի չափը կազմել է 205,590,000 ՀՀ դրամ: Նախորդ երկու տարվա համեմատականը ներկայացված է *Աղյուսակ 8-ում*:

Աղյուսակ 8

ԲԸՏՄ կողմից կիրառված վարչական տուգանքի գումարի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	*ՈՒղղությունները*	*2022*	*2023*	*2024*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	22,340,000	20,550,000	22,950,000
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	2,970,000	3,570,000	6,960,000
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	13,000,000	26,000,000	31,650,000
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	22,230,000	45,850,000	68,500,000
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	4,700,000	4,840,000	4,400,000
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	5,360,000	5,910,000	9,890,000
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	8,130,000	5,550,000	6,110,000
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	16,360,000	17,550,000	21,730,000
9	**Պետական փորձաքննություն**	3,520,000	4,980,000	31,600,000
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	550,000	950,000	1,800,000
ԸՆԴԱՄԵՆԸ		**99,160,000**	**135,750,000**	**205,590,000**

Գծապատկեր 3



Համաձայն այդ տվյալների 2024 թվականի ընթացքում նշանակված տուգանքի չափը 2023 թվականի համեմատությամբ աճել է 51,4%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 107,3%:

Վերահսկողական աշխատանքների արդյունքում հաշվարկվել է **7,969,256,599.1** ՀՀ դրամ գումարի չափով պատճառված վնաս, որից՝

- իրականացվել է 1,488 շրջակա միջավայրին վնասի հաշվարկ՝ 6,277,716,399 ՀՀ դրամ վնաս (ստուգումներով՝ 2,949,986,799 ՀՀ դրամ)
- պետությանը պատճառված՝ 1,691,540,200.1 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Նախորդ երկու տարվա համեմատականը ըստ առավել ռիսկային ուղղությունների ներկայացված է *Աղյուսակ 9-ում և 10-ում*:

Աղյուսակ 9

ԲԸՏՄ կողմից հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկի քանակի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	***ՈՒղղությունները***	***2022***	***2023***	***2024***
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	696	1,143	990
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	99	106	118
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	45	51	69
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	26	33	70
5	**Հողերի օգտագործում և պահպանություն**	82	144	241
ԸՆԴԱՄԵՆԸ		**948**	**1,477**	**1,488**

Աղյուսակ 10

ԲԸՏՄ կողմից հաշվարկված շրջակա միջավայրին և պետությանը պատճառված վնասի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	*ՈՒղղությունները*	*2022*	*2023*	*2024*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	893,690,284	1,249,854,084	1,117,046,776
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	19,823,560	23,530,349	19,167,696
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	198,171,172	180,863,753	2,354,528,016
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	94,974,272	1,638,276,029	431,159,194
5	**Հողերի օգտագործում և պահպանություն**	61,361,290	282,739,700	2,355,814,717
6	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	961,178,695	1,800,918,616	1,691,540,200
ԸՆԴԱՄԵՆԸ		**2,229,199,273**	**5,176,182,531**	**7,969,256,599**

Համաձայն այդ տվյալների 2024 թվականի ընթացքում հաշվարկված վնասի գումարի չափը 2023 թվականի համեմատությամբ աճել է 53,9%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 257,5%:

Գծապատկեր 4



ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողական աշխատանքների արդյունքում իրավապահ մարմիններին ուղարկվել է 684 գործի նյութ՝ 1,742,769,581 ՀՀ դրամ շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկով: Նախորդ երկու տարվա տվյալները ներկայացված է *Աղյուսակ 11-ում*:

Աղյուսակ 11

Իրավապահ մարմիններին ուղարկված նյութերի քանակի համեմատականը նախորդ երկու տարիների հետ		
Ժամանակահատվածը	***Քանակը***	***Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը***
2022	661	944,178,108
2023	900	1,314,902,307
2024	684 *	1,742,769,581

** 2024 թվականի ընթացքում իրավապահ մարմիններին ուղարկված գործերի քանակի նվազումը պայմանավորված է ապօրինի ծառահատման քանակի նվազմամբ և իրականացնողներին չհայտնաբերմամբ, որի հետևանքով նյութերը քիչ են ուղարկվել իրավապահ մարմիններին: 2023 թվականի համեմատությունը՝ ապօրինի ծառահատումների քանակի նվազման (1361 ծառ)՝ թվային պատկերի վերաբերյալ բերված է Աղյուսակ 22-ում :*

Համաձայն այդ տվյալների 2024 թվականի ընթացքում իրավապահ մարմիններին ուղարկված գործերի քանակը 2023 թվականի համեմատությամբ նվազել է 24%, իսկ 2022 թվականի համեմատությամբ աճել է 3,5%:

Հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում ՀՀ իրավապահներին ուղարկված նյութերից թվով 637-ը միայն ապօրինի ծառահատման և փայտանյութի ձեռքբերման վերաբերյալ գործերն են՝ շրջակա միջավայրին պատճառված 876,138,798 ՀՀ դրամ վնասի չափով:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐ

- 2022 թվականի ընթացքում մուտքագրվել է 314,561,597.8 ՀՀ դրամ
- 2023 թվականի ընթացքում մուտքագրվել է 143,868,695.2 ՀՀ դրամ
- 2024 թվականին ընթացքում մուտքագրվել է 242,528,389.6 ՀՀ դրամ

2024 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի մուտքերը 2023 թվականի համեմատությամբ աճել է 68,6%, իսկ 2022 թվականի համեմատությամբ նվազել 22,9%: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Աղյուսակ 12

ԲԸՏՄ վարչական ակտերով սահմանված տուգանքներից պետական բյուջեի թիվ 900005024063 հաշվեհամարին կատարված վճարումների համեմատականը								
Ժամանակահատվածը	Ընդհանուր գործեր, որից		ՀԿԱԾ		Վարչական տուգանք		Բնությանը պատճառված վնաս	
	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
2022	1,414	314,561,598	438	24,351,965	747	80,280,000	229	209,929,633
2023	1,632	143,868,695	587	34,729,544	820	76,400,000	225	32,738,106
2024	1,862	242,528,390	722	86,023,348	831	83,900,000	309	72,605,042

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ուղարկվել 394 որոշում 231,416,751 ՀՀ դրամի բռնագանձման պահանջով:

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ, ՔԱՆԱԿԸ, ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ՀԻՄՔԵՐԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ստուգումներն իրականացվել են Խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 06-Լ որոշմամբ հաստատված ստուգումների տարեկան ծրագրով, ՀՀ վարչապետի հանձնարարականներով, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների հիմքերով:

ԲԸՏՄ ղեկավարի կողմից 2024 թվականին հրապարակված թվով 386 և 2023 թվականից տեղափոխված թվով 13 հանձնարարագրերով ընդհանուր առմամբ իրականացված 399 ստուգումներից՝

- 379-ն ավարտվել է, 11-ը տեղափոխվել է 2025 թվական, իսկ 9 հանձնարարագիր ուժը կորցրած է ճանաչվել,
- կայացվել է վարչական տույժի 561 որոշում,
- կիրառվել է վարչական տույժ՝ 114,400,000 ՀՀ դրամի չափով,
- հաշվարկվել է 4,641,526,999 ՀՀ դրամ վնաս, որից՝ 2,949,986,799 ՀՀ դրամի շրջակա միջավայրի վնաս, պետությանը պատճառված՝ 1,691,540,200 ՀՀ դրամ (ԲԸՏՄ կողմից ներկայացված ծավալային ակտերի հիման վրա հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից),

- կազմվել է 307 ակտ և 72 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք,
- տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 107 պարտադիր կատարման հանձնարարական, որից 52-ը կատարվել է:

399 հանձնարարագրով տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ոլորտները

- ընդերքօգտագործում – 87
- ջրային ռեսուրսներ - 137

  որից՝ ձկնաբուծություն – 62

  էլեկտրաէներգիայի արտադրություն / ՓՀԷԿ, ՋԷԿ/ - 35

  հասարակական սննդի, հյուրանոցների, զվարճությունների և հանգստի կազմակերպում - 23

  ջրամատակարարում - 17
- անտառային տնտեսություն և հատուկ պահպանվող տարածք - 6
- մթնոլորտային օդ - 124

  որից՝ արտադրություն - 82

  շինարարություն – 27

  անասնաբուծություն և բուսաբուծություն – 15
- հողեր, վտանգավոր նյութեր, արտադրության և սպառման թափոններ - 45

  որից՝ սպասարկում /ավտոսպասարկում, գազալցակայան, օդային տրանսպորտի ծառայություն/- 19

  թափոնների տեղադրում և ոչնչացում - 13

  պետության կառավարում և հասարակության սոցիալ-տնտեսական քաղաքականություն – 10

  առողջապահություն – 3

Աղյուսակ 13

Ընդհանուր ստուգումների կատարողականի համեմատականը նախորդ երկու տարիների հետ			
	2022	*2023*	*2024*
Հանձնարարագրերի քանակը, որից	**267**	**292**	**399**
նախորդ տարվանից տեղափոխված	16	20	13
հաշվետու ժամանակահատվածում հրապարակված	251	272	386
Հանձնարարագրերի կատարողական, որից	**267**	**292**	**399**
ուժը կորցրած	6	5	9
ավարտված ստուգումներ	241	274	379
հաջորդ տարի տեղափոխված	20	13	11

Գծապատկեր 5



Աղյուսակ 14

Ընդհանուր ստուգումներով կայացված որոշումների և տրված պարտադիր կատարման հանձնարարականների կատարողականի համեմատականը նախորդ երկու տարիների հետ					
Տարեթիվ	*Վարչական որոշումների քանակ*	*Վարչական տուգանքի գումարի չափը ՀՀ դրամով*	*Շրջակա միջավայրին պատճառված վնասի չափը ՀՀ դրամ*	*Տրված հանձնարարակնների քանակը*	*Կատարված հանձնարարականների քանակը*
2022	444	48,160,000	453,300,104	117	63
2023	426	57,900,000	1,864,802,177	128	64
2024	561	114,400,000	2,949,986,799	107	52

Ստուգումների շրջանակը

Ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ 2024 թվականին թիրախավորվել է տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները՝

- ✓ ընդերքօգտագործում
- ✓ անտառային տնտեսություն և հատուկ պահպանվող տարածք
- ✓ շինարարություն
- ✓ ձկնաբուծություն
- ✓ ջրօգտագործում և ջրահեռացում
- ✓ թափոնների տեղադրում և ոչնչացում
- ✓ արտադրություն
- ✓ պետության կառավարում և հասարակության սոցիալ-տնտեսական քաղաքականություն
- ✓ անասնաբուծություն, բուսաբուծություն
- ✓ հասարակական սննդի, հյուրանոցների, զվարճությունների և հանգստի կազմակերպում

Տարեկան ծրագրով նախատեսված 180 ստուգում իրականացնելու հանձնարարագրերը հրապարակվել են (կատարողականը՝ 100%), *որից 174-ն ավարտվել է, 3-ը տեղափոխվել է 2025 թվական, 3-ը ուժը կորցրած է ճանաչվել:*

Արդյունքում կայացվել է 357 վարչական տույժի որոշում, կիրառվել է վարչական տույժ՝ 56,010,000 ՀՀ դրամի չափով, կազմվել է 156 ակտ և 18 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 79 պարտադիր կատարման հանձնարարական, որից 42-ը կատարվել է:

Հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված վնաս 263,164,198 ՀՀ դրամի չափով:

Ստուգումների տարեկան ծրագրով պլանավորվել էր իրականացնել 180 ստուգում (բարձր 126, միջին 52, ցածր 2): Ավարտված 174 տնտեսավարող սուբյեկտների ստուգումից առաջ և հետո առկա է ռիսկայնության գնահատման հետևյալ պատկերը համաձայն *Աղյուսակ 15-ի*

Աղյուսակ 15

Ռիսկայնության աստիճան	Ստուգումից առաջ	Ստուգումից հետո*
բարձր	121	54
միջին	51	116
ցածր	2	4

**Տարեկան ծրագրով իրականացված ստուգումների արդյունքում տրված պարտադիր կատարման թվով 79 հանձնարարականներից 37-ը գտնվում են ժամկետի մեջ, դրանից կախված՝ հնարավոր է ռիսկի աստիճանի փոփոխություն:*

Աղյուսակ 16

Ստուգումների տարեկան ծրագրի կատարողականի համեմատականը՝ նախորդ երկու տարիների հետ			
	2022	*2023*	*2024*
Տարեկան ծրագրով ստուգումների քանակը	130	155	180
հրապարակված հանձնարարագրեր, որից	129	155	180
ավարտված	122	146	174
ուժը կորցրած	1	3	3
հաջորդ տարի տեղափոխված	6	6	3

2024 թվականի արտածրագրային 219 ստուգումից

2024 թվականին արտածրագրային ստուգումներ իրականացնելու նպատակով հրապարակվել է թվով 206 հանձնարարագիր, *որից 147-ը առանձնահատուկ դեպքերով՝ համաձայն «Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի»*:

2023 թվականից տեղափոխվել էր թվով 13 արտածրագրային ստուգումներ իրականացնելու նպատակով հրապարակված հանձնարարագիր:

2024 թվականի արտածրագրային 219 ստուգումներից ավարտվել է 205-ը, 8-ը տեղափոխվել է 2025 թվական, 6 հանձնարարագիր ուժը կորցրած է ճանաչվել:

Արդյունքում կայացվել է 204 վարչական տույժի որոշում՝ 58,390,000 ՀՀ դրամի չափով, կազմվել է 151 ակտ և 54 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 28 պարտադիր կատարման հանձնարարական, որից 10-ը կատարվել է:

Հաշվարկվել է վնաս 4,641,436,999.1 ՀՀ դրամի չափով, որից՝

- շրջակա միջավայրին՝ 2,686,822,601 ՀՀ դրամ
- պետությանը պատճառված՝ 1,691,540,200.1 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Աղյուսակ 17

Արտածրագրային ստուգումների կատարողականի համեմատականը՝ նախորդ երկու տարիների հետ			
	2022	*2023*	*2024*
Արտածրագրային ստուգումների քանակը	138	137	219
ավարտված	119	128	205
հաջորդ տարի տեղափոխված	14	7	8
ուժը կորցրած	5	2	6

219 հանձնարարագրերի հրապարակման հիմքերը

- 2023 թվականից տեղափոխված տարեկան ծրագրով – 6 ստուգում, որից 5-ը ավարտվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- ՀՀ վարչապետի հանձնարարականով - 13 ստուգում, որոնք ավարտվել են,
- Իրավապահ մարմիններից ստացված գրություններով - 37 ստուգում, որից 33-ը ավարտվել է, 3-ը տեղափոխվել է 2025թ, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,

- ՀՀ նախարարարարությունների գրություններով - 63 ստուգում, որից 59-ը ավարտվել է, 3-ը տեղափոխվել է 2025թ, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- Պետական եկամուտների կոմիտեից ստացված գրություններով - 8 ստուգում, որոնք ավարտվել են,
- քաղաքացիներից ստացված բողոք-դիմումներով - 41 ստուգում, որից ավարտվել է 39-ը, 1-ը տեղափոխվել է 2025թ, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- Տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրություններով - 7 ստուգում, որոնք ավարտվել են,
- ԲԸՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրված խախտումները վերացնելու մասին հանձնարարականների կատարման հիմքով - 8 ստուգում, որից 6-ը ավարտվել է, 1-ը տեղափոխվել է 2025թ, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- Պետական վերահսկողական ծառայությունից ստացված գրությունով - 25, որից ավարտվել է 24-ը, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- Էկոպարեկային ծառայությունից ստացված գրություն – 8 ստուգում, որոնք ավարտվել են,
- Ջրային կոմիտեից ստացված գրություն - 2 ստուգում, որոնք ավարտվել են,
- ԲԸՏՄ նախաձեռնությամբ – 1 ստուգում, որն ավարտվել է:

2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմում է 11 օր, ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների (ինչպես նաև գործուղման) միջին տևողությունը՝ 4 օր, իսկ մեկ ստուգմանը (ինչպես նաև գործուղման) մասնակցած աշխատողների քանակը՝ միջինում 3 աշխատող:

Աղյուսակ 18

Ժամանակահատվածը	Տարեկան ծրագրով ստուգումների միջին տևողությունը	Արտածրագրով ստուգումների միջին տևողությունը	Ստուգմանը մասնակցած աշխատողների քանակը
2022	10	5	3
2023	12	5	3
2024	11	4	3

2021 թվականի հոկտեմբերի 17-ից ԲԸՏՄ «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 29.1 հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակում իրավունք է ձեռք բերել իրականացվող ստուգումների կամ դիտարկումների շրջանակներում անհապաղ կասեցնել բնապահպանական օրենսդրության խախտումներով իրականացվող տնտեսավարող սուբյեկտների գործողությունները կամ գործունեությունը: Իրականացված ստուգումների կամ դիտարկումների շրջանակներում կիրառված կասեցումների քանակը նախորդ տարիների համեմատականով ներկայացված է *Աղյուսակ 19-ում*:

Աղյուսակ 19

Ստուգումների արդյունքներով կասեցված գործունեության/գործողության վերաբերյալ 2022-2023 թվականների համեմատականը						
Ուղղություններ	*Գործունեության/գործողության կասեցում*			*Կասեցման վերացում*		
	2022	*2023*	*2024*	*2022*	*2023*	*2024*
Մթնոլորտային օդի պահպանություն	13	10	17	9	6	5
Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	12	33	80	2	4	11
Ընդերքօգտագործում և պահպանություն	1	2	0	0	0	0
Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	0	1	1	0	0	0
ՇՄԱԳ	0	0	4	0	0	0
Ընդամենը	26	46	102	11	10	16

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում վերհանվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները, մասնավորապես՝

- ՀՀ «Ջրային օրենսգրքի» 21-րդ, 27-րդ հոդվածներ,
- ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ և 110-րդ հոդվածներ,
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 11-րդ, և 21- րդ հոդվածներ,

- ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 46-րդ, 59-րդ և 65-րդ հոդվածներ,
- Թափոնների մասին ՀՀ օրենք 12-րդ, 13-րդ հոդվածներ,
- ՀՀ Հարկային օրենսգրքի 166-րդ, 167-րդ, 168-րդ, 169-րդ, 170-րդ, 203-րդ, 204-րդ, 205-րդ, 212-րդ հոդվածներ:

Աղյուսակ 20

Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները՝ իրականացված ստուգումներով	**2022**	**2023**	**2024**
ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք	142	237	286
ՀՀ Ջրային օրենսգիրք	58	96	127
ՀՀ Հողային օրենսգիրք	69	86	124
ՀՀ Հարկային օրենսգիրք	167	310	232
ՀՀ Անտառային օրենսգիրք	15	19	26
Թափոնների մասին ՀՀ օրենք	128	197	140
Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք	97	152	158
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք	36	27	45
Պաշտոնական վիճակագրության մասին ՀՀ օրենք	53	122	163
Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենք	6	5	3
Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք	0	13	13
Լիցենզավորման մասին ՀՀ օրենք	32	62	30
Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք	20	11	64
Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք	22	17	3
Ընդամենը	**845**	**1354**	**1414**

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԸՏՄ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նշված ժամանակահատվածում ԲԸՏՄ ղեկավարի կողմից հրապարակվել է դիտարկում իրականացնելու մասին թվով 37 հրաման՝ ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն ոլորտում, որից

- 36-ը՝ ավտոլվացման կետ,
- 1-ը՝ հանգստյան գոտի:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է 37 դիտարկում:

Կայացվել է տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կասեցնելու մասին՝ 20 որոշում *(կասեցումների մասին տեղեկատվությունը ընդգրկված է Աղյուսակ 19-ում)*, որից 9 հանվել է

կասեցումից և 1 նախազգուշացում, ինչպես նաև տրվել է խախտումները վերացնելու վերաբերյալ թվով 4 հանձնարարական:

16 տնտեսավարող սուբյեկտների մոտ բնապահպանական օրենսդրության խախտումներ չեն արձանագրվել:

Աղյուսակ 21

Իրականացված դիտարկումների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ			
Ժամանակահատված	*Քանակ*	*Չեն հայտնաբերվել խախտումներ*	*Հայտնաբերված խախտումներ*
2022	-	-	-
2023	16	4	12
2024	37	16	21

1. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	**քանակ/գումար**
արձանագրված իրավախախտում	**916**
կայացվել է վարչական տույժի որոշում	**293**
նշանակվել է վարչական տուգանք	**29,910,000** *դրամ*
նշանակվել է բռնագրավվում	**7**
իրականացվել է վնասի հաշվարկ	**1,108**
հաշվարկվել է պատճառված վնաս	**1,136,214,472** *դրամ*

1.1. Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն

ՀՀ անտառների կառավարումն իրականացվում է Շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 17 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի և Բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) պահպանությունն իրականացնող 6 ՊՈԱԿ-ների միջոցով:

ՀՀ հողային ֆոնդի հաշվեկշռով անտառային հողերը կազմում են 334,001 հեկտար, իսկ հատուկ պահպանվող տարածքները 335,470 հեկտար տարածք:

2024 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Էկոպարեկային ծառայության» մասին ՀՀ օրենքը, որպես պետական ծառայության առանձին տեսակ, որը իրականացնում է պետական

անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների հայտնաբերման, կանխման, կանխարգելման և պահպանության ապահովումը: Նույն օրենքի եզրափակիչ մասի և անցումային դրույթների համաձայն էկոպարեկային ծառայողները Օրենքով իրենց վերապահված լիազորություններն իրականացնելու են սահմանված կարգով մրցույթի արդյունքով պաշտոնի նշանակվելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

Իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում՝

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**782**
կայացվել է վարչական տույժի որոշում	**212**
նշանակվել է վարչական տուգանք	**22,950,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	**990**
իրականացվել է թվով 13,013 ծառի վնասի հաշվարկ	**907, 520,822** *դրամ*
իրականացվել է թվով 3,778.5 խմ վնասի հաշվարկ	**206,070,054** *դրամ*

Իրականացված ստուգումներ

2024 թվականի ընթացքում ԲԸՏՄ ստուգում է իրականացրել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի

- *Արծվաբերդի /ծրագրային/ 42,837 հա*
- *Ստեփանավանի /ծրագրային/ 6,665 հա*
- *Իջևանի /իրավապահից գրություն/ 25,512 հա*
- *Սևքարի /իրավապահից գրություն/ 20,484 հա*
- *Արագածոտնի /իրավապահից գրություն/ 10 հա մասնաճյուղերում*

Իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել և արձանագրվել են թվով 1,592 ապօրինի հատված ծառ և անտառկառավարման խախտումներ, հաշվարկվել է բուսական աշխարհին և անտառներին պատճառված վնաս 125,978,448 ՀՀ դրամի չափով:

Ստուգման արդյունքներով առերևույթ հանցագործության հատկանիշներով հաղորդումներ են ներկայացվել իրավապահ մարմիններին, նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Միաժամանակ ստուգման արդյունքները տրամադրվել էն նաև Լիազոր մարմնին՝ Շրջակա միջավայրի նախարարությանը:

Ստուգումներով արձանագրված խախտումների պատկերը հետևյալն է

1. ***Արծվաբերդի անտառտնտեսություն*** մասնաճյուղում 2024 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 31-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է

- անտառշինական նախագծի բացակայություն 2018 թվականից
- 1,750 քառակուսի մետր անտառային ճանապարհի ապօրինի կառուցում, հաշվարկվել է 2,641,800 ՀՀ դրամ վնաս
- թվով 301 ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 36,442,750 ՀՀ դրամ վնաս

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

2. ***Ստեփանավանի անտառտնտեսություն*** մասնաճյուղում 2024 թվականի հոկտեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- 2018թ. և 2020-2023թթ. հատատեղերի շահագործման ընթացքում իրականացվել է 475. 96 խորանարդ մետր ծավալի անտառանյութի մթերում և անտառից դուրս բերում, որի համար չի վճարվել բնօգտագործման վճարները
- թվով 848 ապօրինի հատված, ոչնչացված և արմատախիլ արված ծառ, հաշվարկվել է 28,537,750 ՀՀ դրամ վնաս

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

3. ***Իջևանի անտառտնտեսություն*** մասնաճյուղում 2024 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 31-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- 2020–2021թթ. իրականացվել է 41,400 քառակուսի մետր մակերեսով անտառտնտեսական ճանապարհների կառուցում առանց համապատասխան նախագծերի և ՇՄԱԳ փորձաքննության դրական եզրակացության, հաշվարկվել է 6,675,696 ՀՀ դրամ վնաս
- թվով 331 ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 14,493,000 ՀՀ դրամ վնաս

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

4. ***Սևքարի անտառտնտեսություն*** մասնաճյուղում 2024 թվականի ապրիլի 22-ից մինչև մայիսի 30-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- 2021–2023թթ. անտառահատման տոմսերի լրացուցիչ ցուցակներում ավելացվել է 803. 78 խորանարդ մետր ծավալով փայտանյութ և ապօրինի դուրս է բերվել անտառից, հաշվարկվել է 28,936,080 ՀՀ դրամ վնաս,
- 2021-2023թթ. իրականացվել է 21,330 քառակուսի մետր մակերեսով անտառտնտեսական ճանապարհների կառուցում առանց համապատասխան նախագծերի և ՇՄԱԳ փորձաքննության դրական եզրակացության, հաշվարկվել է 3,218,872_ՀՀ դրամ վնաս,
- թվով 112 ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 5,032,500 ՀՀ դրամ վնաս

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

5. *Արագածոտնի անտառտնտեսություն* մասնաճյուղում 2024 թվականի օգոստոսի 5-ից 9-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- 2021 թվականին իրականացվել է անտառապատում առանց համապատասխան նախագծերի, առանց անտառապատման հրահանգին և անտառտնկարկներ անտառի շարք փոխադրելու կարգի

Նյութերն ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Իրականացված վարչական վարույթներ

2024 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էկոպարեկային ծառայությունից ստացվել է անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում արձանագրված ապօրինի հատված 8,752 ծառի վերաբերյալ թվով 377 արձանագրություն, որի հիման վրա ԲԸՏՄ հարուցված թվով 377 վարչական վարույթների շրջանակներում ԲԸՏՄ աշխատակիցների կողմից իրականացված տեղանքների կրկնակի զննություններով արձանագրվել է ևս 651 ապօրինի հատված ծառ:

Իրավապահ և այլ մարմիններից ստացված գրություններով, ինչպես նաև ԲԸՏՄ նախաձեռնությամբ հարուցված 119 վարչական վարույթների արդյունքում արձանագրվել է թվով 2,018 ապօրինի հատված ծառ:

Նյութերն ուղարկվել են Քննչական Կոմիտե:

Ըստ տարածքների պատկերը հետևյալն է.

Տավուշի մարզ

- «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ում Էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 535 ծառ, կրկնակի զննությամբ հայտնաբերվել է ևս 23 հատված ծառ, պատճառված վնասի չափը կազմել է 62,245,750 ՀՀ դրամ:
- «Սևքարի անտառտնտեսություն» մասնաճյուղում Էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 1,794 ծառ՝ կրկնակի զննությամբ հայտնաբերվել է ևս 21 հատված ծառ, պատճառված վնասի չափը կազմել է 101,925,750 ՀՀ դրամ:
- «Իջևանի անտառտնտեսություն» մասնաճյուղում Էկոպարեկային ծառայության աշխատակիցների կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 750 ծառ՝ կրկնակի զննությամբ հայտնաբերվել է ևս 57 հատված ծառ, պատճառված վնասի չափը կազմել է 38,712,250 ՀՀ դրամ:
- «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղում Էկոպարեկային ծառայության աշխատակիցների կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 699 ծառ՝ կրկնակի զննության ժամանակ արձանագրվել է ապօրինի հատված ևս 245 ծառ, պատճառված վնասի չափը կազմել է 128,935,500 ՀՀ դրամ:
- «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղում Էկոպարեկային ծառայության աշխատակիցների կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 1 ծառ՝ պատճառված վնասի չափը կազմել է 112,500 ՀՀ դրամ:

24.12.2024թ-ին ԲԸՏՄ աշխատակիցների կողմից արձանագրվել է 21 հատ ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 2,773,000 ՀՀ դրամ վնաս, և 09.01.2025թ-ին նյութերն ուղարկվել են ՀՀ ՔԿ:

Լոռու մարզ

- «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում՝ ՀՀ Էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է 2,658 ապօրինի հատված ծառ՝ կրկնակի զննության ժամանակ հայնտաբերվել է ևս 294 ծառ: Վնասի չափը կազմել է 219,192,000 ՀՀ դրամ:
- «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում ՀՀ Էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է թվով 1,177 ապօրինի հատված ծառ՝ կրկնակի

զննության ժամանակ հայնտաբերվել է ևս 8 ծառ: Վնասի չափը կազմել է 57,428,750 ՀՀ դրամ:

- «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում ՀՀ Էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է թվով 164 ապօրինի հատված ծառ՝ կրկնակի զննության ժամանակ հայնտաբերվել է ևս 3 ծառ: Վնասի չափը կազմել է 8,409,000 ՀՀ դրամ:
- «Տաշիրի անտառտնտեսության» տարածքում ՀՀ Էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է թվով 29 ապօրինի հատված ծառ՝ վնասի չափը կազմել է 1,220,250 ՀՀ դրամ:

Կոտայքի մարզ

- «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում ՀՀ էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 259 ապօրինի հատված ծառ: Վնասի չափը կազմել է 8,206,500 ՀՀ դրամ:

Արագածոտնի մարզ

- «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում ՀՀ էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված և հրդեհի հետևանքով այրված թվով 179 ծառ: Վնասի չափը կազմել է 4,505,000 ՀՀ դրամ:

Վայոց ձորի մարզ

- «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում ՀՀ էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված և հրդեհի հետևանքով այրված թվով 30 ծառ: Վնասի չափը կազմել է 1,267,500 ՀՀ դրամ:

Գեղարքունիքի մարզ

- «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ՀՀ էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 277 ծառ: Վնասի չափը կազմել է 10,761 ,750 ՀՀ դրամ:
- «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում ՀՀ էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 152 ծառ: Վնասի չափը կազմել է 29,233,000 ՀՀ դրամ:

Սյունիքի մարզ

- «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքում ՀՀ էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 34 ծառ: Վնասի չափը կազմել է 884,250 ՀՀ դրամ:
- «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում ՀՀ էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 8 ծառ: Վնասի չափը կազմել է 133,000 ՀՀ դրամ:
- «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում ՀՀ էկոպարեկային ծառայության կողմից արձանագրվել է ապօրինի հատված թվով 6 ծառ: Վնասի չափը կազմել է 559,500 ՀՀ դրամ:

Առավել հաճախ արձանագրված խախտումները

Հայտնաբերվել են ՀՀ անտառային և ՀՀ հողային օրենսգրքերի, Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության, Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքների պահանջների խախտումներ:

Մասնավորապես՝

- անտառային հողերում ապօրինի հատվել են ծառեր, ինչի արդյունքում անտառի սեփականատիրոջ պարտականություններն իրականացվել են ոչ պատշաճ,
- չեն ապահովել անտառօգտագործման, անտառավերականգնման և անտառապատման կարգը,
- իրականացվել է կառուցապատում առանց սահմանված նախագծերի համաձայնեցման և շրջակա միջավայրի ազդեցության դրական փորձաքննության և շինարարության թույլտվության:

Իրականացված վերահսկողական գործառույթներ

- Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հունվարի 19-ի գրության, կապված՝ ՀՀ Կոտայքի մարզում գտնվող մի շարք բնության հուշարձանների հարակից տարածքներում արձանագրված փոփոխությունների և իրավախախտումների հետ՝ ԲԸՏՄ ղեկավարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ:

  Աշխատանքային խումբը ՀՀ Կոտայքի մարզում 2008 թվականի օգոստոսի 14-ի թիվ 967-Ն «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» կառավարության

որոշմամբ հաստատված և դեռևս չանձնագրավորված թվով 15 բնության հուշարձանների տարածքում իրականացրել է վերահսկողական գործառույթներ:

1. «Ծակ քար» բնության հուշարձանի հարակից տարածքում ապօրինի ջրառ իրականացնելու փաստով հարուցված վարչական վարույթի շրջանակներում նշանակվել է 200,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

2. «Ավազան աղբյուր» բնության հուշարձանի հարակից տարածքում իրականացվել են բարեկարգման աշխատանքներ: Աշխատանքների կատարման վերաբերյալ՝ գրություն է ուղղարկվել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքին:

3. «Թագավորանիստ խարամային կոն» և **«Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ»** բնության հուշարձանների հարակից տարածքներում հողերի փորման աշխատանքների կատարման վերաբերյալ ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի ղեկավարը հայտնել է, որ նշված տարածքների հարավային և արևմտյան հատվածները հանդիսանում են պետական սեփականության հատուկ նշանակության հողեր և զորավարժություններ անցկացնելու նպատակով աշխատանքները կատարվել են իրավասու մարմինների կողմից:

4. «Հաղպրտանք աղբյուր» բնության հուշարձանի տարածքում իրականացված շինարարական աշխատանքներ: Աշխատանքների կատարման վերաբերյալ գրություն է ուղղարկվել ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքին:

5. «Համով աղբյուր» բնության հուշարձանի տարածքում բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքեր չեն հայտնաբերվել:

6. «Քաղցր աղբյուր» բնության հուշարձանի տարածքի վերաբերյալ ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարը հայտնել է, որ Արզնի համայնքապետարանի գույքացանկում «Քաղցր աղբյուր»-ի տարածք հաշվառված չէ և չկան որևէ փաստաթղթեր:

7. «Վիշապալիճ» կոչվող տարածքում «Ջրառ» ՓԲԸ-ն իրականացնում է ջրառ՝ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունից ստացված թիվ 0372-23 ջրօգտագործման թույլտվության համաձայն:

8. «Սագերի» լիճ կոչվող տարածքում բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքեր չեն հայտնաբերվել:

9. «Ալպյան գորգ» կոչվող տարածքում բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքեր չեն հայտնաբերվել:

10. «Ակնա» լիճ կոչվող տարածքում իրականացվել է ջրառ, սակայն ջրառ իրականացնողը չի հայտնաբերվել, ուստի վարչական վարույթը կարճվել է:

11. «Լուսնա» լիճ կոչվող տարածքում իրականացվել է ջրառ, սակայն ջրառ իրականացնողը չի հայտնաբերվել, ուստի վարչական վարույթը կարճվել է:

12. «Բազմալիճք» լիճ կոչվող տարածքում իրականացվել է ջրառ, սակայն ջրառ իրականացնողը չի հայտնաբերվել, ուստի վարչական վարույթը կարճվել է:

13. «Գութանասար» հրաբուխ կոչվող տարածքում բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքեր չեն հայտնաբերվել:

14. «Հատիս» հրաբուխ կոչվող տարածքում իրականացվել է չափագրում, չափագրության թվային տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2,218 քմ մակերեսով տարածքից տեղահանվել է 12,799 խմ ավազանման լեռնային զանգված, ինչի արդյունքում դեգրադացվել է 839 քմ տարածք, որի վերաբերյալ կատարվել է հողերի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկ՝ 26,162 հազար ՀՀ դրամ:

Ուսումնասիրության ընթացքում կազմված և ձեռքբերված փաստաթղթերը ուղարկվել են Տեղական ինքնակառավարման մարմիններին, Ներքին գործերի նախարարությանը և ՀՀ քննչական կոմիտեին՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

Իրականացված կանխարգելիչ միջոցառումներ

Համաձայն ԲԸՏՄ 2024 թվականի տարեկան գործունեության ծրագրի՝ իրականացվել են ապօրինի՝ ծառահատման, որսի, հողի բերրի շերտի, ձեռք բերված փայտանյութի դուրս բերումն ու տեղափոխումը բացառող ուժեղացված միջոցառումներ: Միջոցառումների ընթացքում արձանագրվել են 432,18 խմ ծավալի ապօրինի ձեռք բերված փայտանյութի

տեղափոխման 3 դեպք, 1250 կգ ծավալով ապօրինի ձեռք բերված փայտածուխի տեղափոխման 1 դեպք, ապօրինի ձեռք բերված հողի բերրի շերտի տեղափոխման 5 դեպք՝ 34,0 խմ ծավալով և 3 միավոր զենքի վերաբերյալ նշանակվել է բռնագրավվում:

- ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում Ձիլ մակնիշի ավտոմեքենայում արձանագրվել է 4,8 խմ կողահատ տախտակ առանց համապատասխան փաստաթղթերի, կատարվել է վնասի հաշվարկ 556,800 ՀՀ դրամի չափով, մեքենան տեղափոխվել է ՆԳՆ Դիլիջանի բաժին հետագա ընթացքը ապահովելու նպատակով:
- Սևան Երևան մայրուղում արձանագրվել է հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման դեպք՝ իրավախախտը ենթարկվել է 50,000 ՀՀ դրամ վարչական պատասխանատվության:
- ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում արձանագրվել է 1,250 կգ փայտածուխի տեղափոխում՝ առանց համապատասխան փաստաթղթերի, կատարվել է վնասի հաշվարկ 374,400 ՀՀ դրամի չափով, նյութերը գտնվում են ՆԳՆ Տավուշի մարզային վարչություն:
- ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի վարչական շրջանում արձանագրվել և ի պահ է վերցվել 1 միավոր զենք և 1 հատ ձայնարձակիչ սարք, իրավախախտը ենթարկվել է 70,000 ՀՀ դրամ վարչական պատասխանատվության:
- ՀՀ Արագածոտնի մարզի Թաթուլ գյուղի վարչական տարածքում արձանագրվել է ապօրինի որսի երկու դեպք՝ ի պահ է վերցվել 2 միավոր զենք և որսված 28 «Տափաստանային արտույտ»:
- ՀՀ Արարատի մարզի Արբաթ բնակավայրի վարչական տարածքում ստուգվել է DAF մակնիշի մեքենան, որը բեռնված է եղել 2,2 մետր երկարությամբ 18,79 խմ ծավալով հաճարենի ծառատեսակից պատրաստված կողահատ տախտակով առանց համապատասխան փաստաթղթերի, կատարվել է վնասի հաշվարկ 2,593,020 ՀՀ դրամի չափով, մեքենան տեղափոխվել է ՆԳՆ Արարատի բաժին հետագա ընթացքը ապահովելու նպատակով:
- ՀՀ Արարատի մարզի Արբաթ բնակավայրի 4-րդ փողոցի 54 հասցեում գտնվող կահույքի արտադրամասում, որտեղ եղել է 2,2 մետր երկարությամբ 403,49 խմ հաճարենի և 5,1 խմ հացենի ծառատեսակներից պատրաստված կողահատ տախտակներ առանց

համապատասխան փաստաթղթերի, կատարվել է ընդհանուր առմամբ վնասի հաշվարկ 56,773,020 ՀՀ դրամի չափով:

(18. 03. 2024թ. №Կ 142-Ա, 06. 09. 2024թ. №Կ 677-Ա)

Միջոցառման ընթացքում կիրառվել են նաև անօդաչու թռչող սարքեր՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և Բնության հատուկ պահպանվող տարածքների անտառածածկ տարածքները դիտարկելու նպատակով:

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն

ԲԸՏՄ վերահսկողական և կանխարգելիչ միջոցառումների արդյունքների, ինչպես նաև Էկոպարեկային ծառայության կողմից տարվող հսկողական աշխատանքների երկու տարիների իրավիճակն արտացոլող աղյուսակի տվյալների վերլուծությունից նկատվում է ապօրինի ծառահատումների թվի նվազում:

Ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման դեպքերը նախորդ տարվա համեմատ հետևյալն է՝ համաձայն *Աղյուսակ 22-ի*

Աղյուսակ 22

Ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխում					
ժամանակահատվածը	Հատված ծառերի քանակը /հատ/	Ձեռքբերված փայտանյութի ծավալը /խմ/	Տուգանված անձանց թիվը	Վարչական տուգանքի չափը (ՀՀ դրամ)	Բնությանը պատճառված վնասի գումարի չափը (ՀՀ դրամ)
2022	18,405	1,232	218	22,340,000	893,690,284
2023	14,374	2,248	189	19,210,000	1,249,854,084
2024	13,013	3,778.5	177	18,550,000	1,113,590,876

Ապօրինի ծառահատումների քանակային վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել խնդրահարույց են ՀՀ Տավուշի և Լոռու մարզերը:

Աղյուսակ 23

Ապօրինի ծառահատումների քանակը/հատ՝ ըստ խնդրահարույց մարզերի		
ժամանակահատվածը	**Տավուշի մարզ**	**Լոռու մարզ**
2022	**4,217**	**5,620**
2023	**6,076**	**6,555**
2024	**5,181**	**6,377**

1.2. Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն

Իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում՝

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**134**
կայացվել է վարչական տույժի որոշում	**81**
նշանակվել է վարչական տուգանք	**6,960,000** *դրամ*
նշանակվել է բռնագրավվում	**7**
իրականացվել է վնասի հաշվարկ	**118**
հաշվարկվել է պատճառված վնաս	**19,167,696** *դրամ*

Իրականացված կանխարգելիչ գործողություններ

Համաձայն ԲԸՏՄ 2024 թվականի տարեկան գործունեության ծրագրով իրականացվել են տափաստանային արտույտի սեզոնային միգրացիայի ընթացքում ապօրինի որսի կանխարգելման և որսի թույլտվության ժամանակահատվածում ապօրինի որսորդության դեմ ուժեղացված միջոցառումներ:

(18. 03.2024թ. №Կ 142-Ա, 06. 09. 2024թ. №Կ677-Ա)

- արձանագրվել է շուրջ **59 (2023 թվականին 140, 2022 թվականին 194)** վայրի կենդանիների արտահանման, պահման պայմանների խախտման և ապօրինի որսի դեպք, որից 47 վայրի կենդանու ապօրինի որս՝ 26 տափաստանային արտույտ, 7 նապաստակ, 4 կաքավ, 6 վայրի աղավնի, 1 լոր, 3 վայրի խոզ,
- արձանագրված 7 իրավախախատման դեպքով՝ 892 հատ կարմրախայտի ապօրինի որս և 66 իրավախախատման դեպքով՝ 3,105.1 կգ այլ տեսակի ձկների ապօրինի որս **(2023 թվականին 3128,433 կգ, 2022 թվականին 2997 կգ)**,
- ի պահ է վերցվել 73 հատ լողամիջոց **(2023 թվականին 11, 2022 թվականին 3)**, 923 հատ ձկնորսական ցանց **(2023 թվականին 254, 2022 թվականին 314)**, 2,589 հատ խեցգետնորսիչ **(2023 թվականին 145, 2022 թվականին 1192)**, 1 հատ

ուռկան, 3 հատ լողամիջոցի շարժիչ, 7 միավոր որսորդական զենք **(2023 թվականին 8, 2022 թվականին 13)**, 50 հատ փամփուշտ, 1 հատ էլեկտրոնային ձայնարձակիչ սարք:

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն

Վերահսկողության արդյունքներով բարձր ռիսկային են ապօրինի որսի և սիգի ձվադրման ժամանակահատվածի հետ կապված ձկնորսության խնդիրները:

Աղյուսակ 24

Հայտնաբերված և առգրավված վայրի կենդանիների քանակը				
Ժամանակահատվածը	**Հայտնաբերված և առգրավված վայրի կենդանիների քանակը /հատ/**	**Վարչական տույժերի քանակը**	**Վարչական տուգանքի չափը /ՀՀ դրամ/**	**Բնությանը պատճառված վնասի գումարի չափը /ՀՀ դրամ/**
2022	**194**	**27**	**2,920,000**	**19,823,560**
2023	**140**	**42**	**3,570,000**	**23,530,349**
2024	**62**	**18**	**850,000**	**982,000**

Սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացված միջոցառումներ

«Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումներ» ծրագրի շրջանակում 2024 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2025 թվականի հունվարի 20-ը ներառյալ վերահսկողական ուժեղացված միջոցառումներ են իրականացվել Սևանա լճում և հարակից տարածքներում, որոնց ընթացքում կիրառվել են ***գիշերային տեսանելիության և ջերմատեսիլ***, ինչպես նաև ***անօդաչու թռչող սարքեր***:

Միջոցառման ընթացքում ուժեղացված վերահսկողություն է իրականացվել նաև Երևան քաղաքի և մարզերի ձկան վաճառքի կետերում:

Միջացառման ընթացքում հայտնաբերված **97** դեպքերից հարուցվել է **72 վարչական վարույթ (գործերի քննությունները ընթացքի մեջ են),** ինչպես նաև առերևույթ հանցագործության հատկանիշներով ԲԸՏՄ կողմից հաղորդումներ են ներկայացվել իրավապահ մարմիններին, որի արդյունքում նախաձեռնվել է թվով **25 քրեական վարույթ**:

Իրականացված միջոցառման ընթացքում արդյունքները հետևյալն են՝

- Առգրավված սիգ ձկնատեսակ՝ **2784,456 կգ,**
- Առգրավված սիգի ձկնկիթ՝ **1,7 կգ**

- Պատճառված վնասի հատուցման չափը՝ **12,847,940** ՀՀ դրամ
- Լողամիջոց՝ **61 հատ**
- Խեցգետնորսիչ՝ **119 հատ**
- Ձկնորսական ցանց՝ **908 հատ**
- Լողամիջոցի շարժիչ՝ **3 հատ**

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

- «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:
- ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1423-Ն որոշման 10-րդ, 11-րդ և 12-րդ հավելվածներում ներկայացվել են փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ:
- ԲԸՏՄ լիազորությունների շրջանակում ապօրինի մթերված փայտանյութի տեղափոխման դեմ իրականացված աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են ֆիզիկական անձանց, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից անտառօգտագործման և փայտանյութի տեղափոխման բազմաթիվ խախտումներ: Այս դեպքում մասնավորապես անվերահսկելի է դառնում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հատատեղերի շահագործման և փայտանյութի դուրս բերման գործընթացը, առկա են փաստաթղթերին ոչ համապատասխան փայտանյութի տեղափոխման դեպքեր:

Նշված խախտումները բացառելու և աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվել է անտառօգտագործման գործընթացը կարգավորող օրենսդրական և այլ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնցով անտառօգտագործման իրավունքը կվերապահվի բացառապես Լիազոր մարմնին և կբացառվի այլ անձանց (ֆիզիկական անձ, ԱՁ, ՍՊԸ) տրամադրված փաստաթղթերով փայտանյութի մթերումը և դուրսբերումը:

- Վերջին տարիներին հաճախակի են դարձել ահազանգերը՝ վայրի կենդանիների բնակավայրեր մտնելու, վնասներ հասցնելու, ինչպես նաև կենդանիների խեղման և վնասման դեպքերը: Այդ ահազանգերը ստանում է ԲԸՏՄ և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունը:

Բնակավայրերում քաղաքացիներին աջակցելու, մրգատու այգիներին, գյուղատնտեսական կենդանիներին, մեղվաընտանիքներին հասցվող վնասի փոխհատուցման նպատակով առաջարկվում է ներդնել ապահովագրական համակարգ:

- Շրջակա միջավայրի նախարարության, Վայրի բնության հիմնադրամի և շահագրգիռ այլ կառույցների հետ համագործակցությամբ, տեղադրելով վայրի կենդանիների մուտքը բնակավայրեր արգելող համակարգեր, բացառել վայրի կենդանիների (հատկապես արջերի) ապօրինի որսը:

Առաջարկվել է ստեղծել նոր ծառայություն կամ պայմանագրային հիմունքներով պատվիրակել մասնավոր կազմակերպություններին իրականացնելու՝ խեղված, վնասված կենդանիների, թռչունների փրկությունը և տեղափոխումը վերականգնողական կենտրոններ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը

ԿՎՎ աշխատակիցները Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում մասնակցել են անօդաչու թռչող սարքերի (դրոնների) կիրառման և ծրագրային ապահովման դասընթացներին:

Նոր տեխնոլոգիաների կիրառումը էականորեն կբարձրացնի կենսաբազմազանության ոլորտում վերահսկողության արդյունավետությունը, մասնավորապես՝ անտառածածկ տարածքների և որսահանդակների դիտարկումը անօդաչու թռչող սարքերով կնվազեցնի մարդկային գործոնի ներգրավվածությունը և նյութատեխնիկական միջոցների օգտագործումը:

ԿՎՎ աշխատակիցները կիրառում են նոր ձեռք բերված պլանշետները, որը տեսուչներին թույլ է տալիս անտառածածկ տարածքներում էլեկտրոնային քարտեզների միջոցով ճիշտ տեղորոշվելուն, իրավախախտման վայրը կոորդինատների միջոցով ճշգրիտ նշելուն և իրավախախտման փաստը տեսա և լուսանկարահանելու համար:

2. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ, ՋՐԵՐԻ, ՀՈՂԵՐԻ, ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2.1. Մթնոլորտային օդի պահպանություն

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**397**
կայացվել է վարչական տույժի որոշում	**291**
նշանակվել է վարչական տուգանք	**31,650,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	**69**
հաշվարկվել է պատճառված վնաս	**2,354,528,016** *դրամ*
որից՝ «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ում	**2,209,153,986** *դրամ*
2016-2019 թվականների ժամանակահատվածում	**1,303,571,096** *դրամ*

Իրականացված ստուգումներ

Մթնոլորտային օդի պահպանության վերահսկողությունը ԲԸՏՄ իրականացնում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվությունների առկայության և այդ թույլտվություններով սահմանված նորմատիվների պահպանումը:

2024 թվականի ընթացքում մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ իրականացված ստուգումներում և/կամ վարչական վարույթներում ընդգրկվել են հետևյալ ոլորտները

- Շինարարություն՝ 207,

  որից՝ սորուն նյութերի տեղափոխման՝ 103 դեպք (2023թ.՝ 64)
- Արտադրություն՝ 74,
- Ընդերքօգտագործում՝ 65,
- Անասնաբուծություն և բուսաբուծություն՝ 15,
- Այլ ոլորտներ՝ 36,

  որից՝ խոզանների, տերևների այրմամբ առաջացած ծխի արտանետման 37 դեպք (2023թ.՝ 24):

Իրականացված վարչական վարույթներ

- Կազմակեպված միջոցառումների արդյունքում ԲԸՏՄ կողմից արձանագրվել է 207 իրավախախտման դեպք, որից 104-ը շինարարական կազմակերպություններում, 103-ը (51-ը Երևանում)՝ ավտոտրանսպորտային միջոցներով առանց անթափանց ծածկոցով

սորուն նյութերի տեղափոխման համար: Հարուցված վարչական վարույթների հիման վրա նշանակվել է 13,300,000 ՀՀ դրամ վարչական տուգանք:

- 2024 թվականի ընթացքում խոզանների, տերևների, թափոնների, մալուխների այրման հետևանքով առաջացած ծխի արտանետումների վերաբերյալ ՆԳՆ փրկարար ծառայության ճգնաժամային ազգային կենտրոնից և քաղաքացիներից ստացվել է 202 ահազանգ, ինչի վերաբերյալ ԲԸՏՄ աշխատակիցների կողմից կազմվել է թվով 37 (2023թ.՝ 24) արձանագրություն, իրավախախտները ենթարկվել են վարչական տույժի, իսկ իրավախախտներին չհայտնաբերելու դեպքերով գործերը ուղարկվել են իրավապահ մարմիններին՝ իրավախախտներին հայտնաբերելու և գործի հետագա ընթացքը որոշելու համար:

Իրականացված վերահսկողական գործառույթներ

Առանց սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվության գործունեություն իրականացնելու հետևանքով կայացվել են թվով 17 գործունեությունը/գործողությունը կասեցնելու վերաբերյալ որոշումներ հետևյալ ոլորտներում՝ 10 արտադրություն, 5 ընդերքօգտագործում և 2 շինարարություն, որոնցից 5-ը խախտումները վերացնելու հիմքով կասեցումից հանվել են հետևյալ ոլորտներում՝ 4 արտադրություն, 1 ընդերքօգտագործում:

Երևան քաղաքում իրականացված վերահսկողության արդյունքներ

2024 թվականին ԲԸՏՄ Երևան քաղաքում մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ իրականացվել է թվով 22 ստուգում հետևյալ ոլորտներով.

- Արտադրություն - 10
- Ընդերքօգտագործում - 3
- Շինարարություն - 5
- Անասնաբուծություն – 2
- ՋԷԿ - 1
- Հասարակական սննդի, հյուրանոցների, զվարճությունների և հանգստի կազմակերպում - 1

Իրականացված 22 ստուգումների արդյունքում կայացվել է վարչական տուգանքի 26 որոշում՝ 4,350,000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև թվով 18 ստուգումով հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված վնաս՝ 24,786,703 ՀՀ դրամի չափով:

Վերահսկողական գործառույթների ընթացքում ԼՀԲ կողմից իրականացվել է թվով 109 մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ չափագրում, արդյունքում 10 չափագրված պարամետր գերազանցել են սահմանային թույլատրելի չափաքանակը:

2024 թվականին ԲԸՏՄ Երևան քաղաքում արձանագրվել է թվով 187 իրավախախտման դեպք (2023թ.՝ 193), կայացվել է թվով 142 վարչական տույժի որոշում՝ (2023թ.՝ 130), նշանակվել է 14,000,000 ՀՀ դրամ վարչական տուգանք՝ (2023թ.՝ 15,750,000 դրամ), 18 դեպքով հաշվարկվել է շրջակա միջավայրի պատճառված վնաս՝ 24,786,703 ՀՀ դրամ, (2023թ՝ 6,703,932 ՀՀ դրամ):

- Երևան քաղաքում իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում 52 շինարարական կազմակերպությունների կողմից՝ մթնոլորտային օդի պահպանության պահանջը խախտելու համար հարուցված վարչական վարույթների արդյունքում նշանակվել է 6,950,000 ՀՀ դրամ վարչական տուգանք: 2023 թվականին ընթացքում 77 շինարարական կազմակերպությունների կողմից՝ մթնոլորտային օդի պահպանության պահանջը խախտելու համար հարուցված վարչական վարույթների արդյունքում նշանակվել է 11,350,000 ՀՀ դրամ վարչական տուգանք:
- 2024 թվականի տարեկան գործունեության ծրագրով Երևան քաղաքում իրականացված առանց անթափանց ծածկի սորուն նյութերի տեղափոխման նկատմամբ իրականացվող միջոցառումների ընթացքում արձանագրված թվով 51 դեպքով նշանակվել է 2,550,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: 2023 թվականի ընթացքում արձանագրված թվով 32 դեպքով նշանակվել է 1,600,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Իրականացված կանխարգելիչ գործողություններ

Համաձայն ԲԸՏՄ 2024 թվականի տարեկան գործունեության ծրագրի՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում իրականացվել են առանց անթափանց ծածկոցով երթևեկող ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ վերահսկողական աշխատանքներ, ինչի արդյունքում ԲԸՏՄ կողմից արձանագրվել է 103 իրավախախտման դեպք:

Առավել հաճախ արձանագրված խախտումները

- առանց սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվության գործունեություն
- թույլտվության չափաքանակների գերազանցմամբ գործունեություն
- շինհրապարակներում սահմանված պահանջների խախտում
- Առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի տեղափոխում
- խոզանների, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքների, արտադրության կամ սպառման կամ տերևաթափից առաջացած թափոնների այրում:

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

1. ԲԸՏՄ շինարարական հրապարակներում վերահսկողական գործառույթներն իրականացնելիս առնչվում է մի շարք խոչընդոտների, մասնավորապես «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ շենքերը և շինությունները անհրաժեշտ է շինարարության համապատասխան բարձրությամբ ծածկել **անթափանց թաղանթով,** սակայն պահանջի չկատարման դեպքում տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ վարչական վարույթ իրականացնելիս Օրենքի տվյալ հոդվածի ոչ հստակ ձևակերպման հետևանքով ԲԸՏՄ չի կարողանում հիմնավորել անթափանց թաղանթի կիրառման նշանակությունը, քանի որ տնտեսավարող սուբյեկտները շինարարությունը ծածկում են այնպիսի անթափանց թաղանթով, որը չի ապահովում Օրենքով ամրագրված պահանջի կատարումը:

   Խնդրի կարգավորման նպատակով դեռևս 2023 թվականին շինհրապարակներում **փոշենստեցնող (փոշեզսպող) սարքավորումներ** տեղադրելու առաջարկություն է ներկայացվել Շրջակա միջավայրի նախարարին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, Քաղաքաշինության կոմիտեի նախագահին և Երևանի քաղաքապետին:

Առաջարկել է Քաղաքաշինության կոմիտեին և Շրջակա միջավայրի նախարարությանը քննարկել Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջը կիրառելի դարձնելու համար որոշակի օրենսդրական փոփոխություններ կատարելու

նպատակահարմարության հարցը: Միաժամանակ առաջարկվել է շինարարությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների համար սահմանել պարտադիր պահանջ, որով վերջիններս կպարտավորվեն իրենց գործունեության ընթացքում կիրառել փոշենստեցնող (փոշեզսպող) սարքավորումներ, ինչը կկրճատի կամ կբացառի շինարարական աշխատանքների ժամանակ մթնոլորտային օդ փոշու արտանետումները:

2. Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկ կատարելիս ԲԸՏՄ առնչվում է մի շարք խնդիրների՝ մասնավորապես.

   Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի *«Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին»* N 91-Ն որոշման հավելվածի՝ 9-րդ կետով սահմանված է աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցները, սակայն ակտիվ աղտոտման գոտին համասեռ չէ: Ուստի գործնականում անհնարին է դառնում Շգ-ի՝ **անհամասեռ ակտիվ աղտոտման գոտու** գործակցի որոշելը, իսկ տնտեսավարող սուբյեկտների կողմից լիազոր մարմին ներկայացված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերում Շգ-ն հաշվարկվում է ըստ հայեցողության, որոնց հիման վրա հետագայում տրամադրվում են արտանետման թույլտվություններ:

Խնդրի լուծման համար առաջարկություն է ներկայացվել Գրասենյակ և լիազոր մարմնին՝ օրենսդրական բացերը կարգավորելու նպատակով:

3. ՀՀ մարզերում գործող աղբավայրերում ինքնայրման դեպքերով իրականացված վարչական վարույթի շրջանակներում բացահատվել է, որ Երևանի քաղաքապետարանը և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև մարզպետարանները պատշաճ չեն իրականացրել շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և կանխարգելման նպատակով աղբավայրի հսկողությունը, ինչպես նաև աղբի ինքնայրումը կանխելու համար հակահրդեհային միջոցառումները, որի արդյունքում մթնոլորտային օդը աղտոտվում է:

Խնդրի լուծման համար առաջարկվել է Երևանի քաղաքապետարանին, տեղական ինքնակառավարման մարմիններին և մարզպետարաններին աղբի ինքնայրումը կանխելու նպատակով իրականացնել հակահրդեհային միջոցառումներ:

4. Երևան քաղաքում վերահսկողական գործողություններ իրականացնելիս պարզվել է, որ ճանապարհներին իրականացվում են գազատարների, էլեկտրահաղորդալարերի, կոյուղատարների, ջրագծերի և այլ կոմունիկացիաների անցկացման համար՝ խրամուղիների փորման աշխատանքներ: Աշխատանքները ոչ պատշաճ կազմակերպելու *(շինարարական հրապարակները սահմանված ձևով չկահավորելու)* և ժամանակին ճանապարհները չասֆալտապատելու հետևանքները հանգեցնում են փոշու արտանետումներով օդի աղտոտվածության մակարդակի բարձրացմանը:

Վերը նշված խնդրի լուծման համար առաջարկվել է Երևանի քաղաքապետարանին նշված աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները կանխարգելելու նպատակով հսկողությունը խստացնել, ինչպես նաև շինարարական աշխատանքներով հագեցված տարածքների հարակից ասֆալտապատված փողոցները օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար ջրել:

5. Երևան քաղաքում վերահսկողական գործողություններ իրականացնելիս պարզվել է, որ շինարարական նյութերի վաճառակետերում սորուն նյութերը՝ ավազը, խիճը և այլը գտնվում են բաց տարածքներում, որոնք ևս հանգեցնում են փոշու արտանետումներով օդի աղտոտվածության մակարդակի բարձրացմանը:

Երևանի քաղաքապետարանին առաջարկվել է բաց տարածքներում շինարարական նյութերի վաճառքով զբաղվող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ խստացնել հսկողությունը՝ փոշու արտանետումները կանխարգելելու նպատակով:

6. Շենքերի և շինությունների կառուցման (վերակառուցման, վերականգնման, քանդման, հիմնական և ընթացիկ նորոգման, մայթերի սալիկապատման, հղկման) աշխատանքների ընթացքում փոշու արտանետումների շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարություն, ինչպես նաև փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ կատարող անձինք դրանք իրականացնելու ընթացքում պարտավոր են աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ: Երևան քաղաքի

ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» թիվ 405-Ն որոշման համաձայն՝ Երևան քաղաքում քաղաքաշինությամբ զբաղվող կազմակերպությունների նկատմամբ հսկողության իրականացումը վերապահված է Երևանի քաղաքապետարանին:

Երևանի քաղաքապետարանին առաջարկվել է խստացնել շինարարություն իրականացնող կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողությունը:

2.2. Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**160**
կայացվել է վարչական տույժի որոշում	**128**
նշանակվել է վարչական տուգանք	**68,500,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	**70**
հաշվարկվել է պատճառված վնաս	**431,159,194** *դրամ*
որից՝ «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ում	**263,608,461** *դրամ*

Իրականացված ստուգումներ

Ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման վերահսկողությունը ԲԸՏՄ իրականացնում է ջրային ռեսուրսների ինքնակամ և ոչ նպատակային օգտագործման, ջրօգտագործման թույլտվություն և ազատ ջրօգտագործում պահանջող ջրօգտագործման իրականացման պահանջների կատարման և սահմանված չափաքանակներից ավել ջրային ռեսուրսներն աղտոտելու նկատմամբ:

2024 թվականի ընթացքում Ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման վերաբերյալ իրականացված ստուգումներում և/կամ վարչական վարույթներում ընդգրկվել են հետևյալ ոլորտները

- Ձկնաբուծություն՝ 62,
- Էլեկտրաէներգիայի արտադրություն՝ 35,
- Հասարակական սննդի, հյուրանոցների, զվարճությունների և հանգստի կազմակերպում՝ 23,
- Ջրամատակարարում ջրօգտագործում՝ 17
- Ընդերքօգտագործում՝ 6,
- Այլ ոլորտներ՝ 17:

Առանց ջրօգտագործման թույլտվության 987 խորքային հորի շահագործման տեղեկատվությունների հիման վրա իրականացվել է խորքային հորերի շահագործման օրինականությունը պարզելու նպատակով 564 խորքային հորերի 40 ստուգում և 7 վարչական վարույթ,

Արմավիրի մարզ

- Ձկնաբուծություն 4 խորքային հոր, բոլոր խորքային հորերի շահագործումը կասեցվել են,
- Խմելու - կենցաղային, գյուղատնտեսական 355 խորքային հոր, 17 խորքային հորերի շահագործումը կասեցվել է:

Արարատի մարզ

- Ձկնաբուծություն 29 խորքային հոր, 17 խորքային հորերի շահագործումը կասեցվել է:
- Խմելու - կենցաղային, ոռոգում 176 խորքային հոր:

Արդյունքում նշանակվել է 12,600,000 ՀՀ դրամի վարչական տուգանք, հաշվարկվել է 15,098,538 ՀՀ դրամի շրջակա միջավայրին պատճառված վնաս և թվով 38 խորքային հորի շահագործումը կասեցվել են:

- ԲԸՏՄ կողմից իրականացված ստուգումներով պարզվել է, որ խորքային հորերը օգտագործվում են ապօրինի կամ չեն շահագործվում, որի հիմքով թվով 9 խորքային հորի վերաբերյալ գրություններ են ներայացվել Շրջակա միջավայրի նախարարություն՝ խորքային հորերը լուծարման և/կամ կոնսերվացման աշխատանքներում ներառելու համար: Կոնսերվացման և/կամ լուծարման դեպքում հետագա օգտագործման համար կխնայվի մոտ 15 լ/վ ջուր կամ տարեկան կտրվածքով 470,000 մ^3 ջուր:

  Իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում, նաև պարզվել է թվով 129 այլ ապօրինի խորքային հորերի օգտագործում կամ չշահագործում, որոնք գտնվում են ճշգրտման փուլում: Ճշգրտումների ավարտից հետո գրություն կներայացվի Շրջակա միջավայրի նախարարությանը՝ խորքային հորերը լուծարելու և/կամ կոնսերվացելու վերաբերյալ: Լուծարման և/կամ կոնսերվացման ենթակա

խորքային հորերի ընդհանուր խնայումը կկազմի մոտ 650 լ/վ ջուր կամ տարեկան կտրվածքով 20,000,000 մ³ ջուր:

- Մեծամոր խոշորացված համայնքում իրականացված ստուգման արդյունքներով հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ 1,496,781 ՀՀ դրամ, որի չափը գերազանցել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված էական վնասի չափը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացված՝ 375.1 հոդվածի պահանջը, ըստ որի առանց ջրօգտագործման թույլտվության ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրօգտագործում իրականացնելը 2024 թվականի հուլիսի 1-ից առաջացնում է քրեական պատասխանատվություն, ուստի Մեծամոր խոշորացված համայնքի ստուգման նյութերը ուղարկվել է իրավապահ մարմիններին՝ գործի հետագա ընթացքը ապահովելու նպատակով:
- Ազգային անվտանգության ծառայության գրության հիման վրա ստուգումներ են իրականցվել Սյունիքի մարզի Գորիս, Տաթև, Սիսիան և Մեղրի համայնքներում գործող 11 փոքր հիդրոէլեկտրոկայաններից (ՓՀԷԿ) թվով 7 տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել են ջրօգտագործման թույլտվության պահանջների խախտման դեպքեր՝ իրականացրել են ջրօգտագործման թույլտվություններով սահմանված չափաքանակներից ավել ջրառ, ինչի հետևանքով հաշվարկվել է 6,011,238 ՀՀ դրամի վնաս և պատասխանատուները ենթարկվել են վարչական տույժի՝ 3,000,000 ՀՀ դրամի չափով: Սյունիքի մարզի 4 ՓՀԷԿ-եր ընդգրկվել են ԲԸՏՄ 2025 թվականի հաստատված ստուգումների տարեկան ծրագրի 1-ին եռամսյակում:

Ընդհանուր ստուգումներով հայտնաբերված ապօրինի ջրառ իրականացնելու հետևանքով կանխվել է շուրջ 790 լ/վրկ կամ տարեկան կտրվածքով 11,000,000 մ³ ապօրինի ջրօգտագործում, որը մոտավորապես համարժեք է Սյունիքի մարզի Շամբի ջրամբարի օգտագործվող ջրածավալի քանակությանը՝ 11,800,000 մ³ կամ Տավուշի մարզի Հախումի ջրամբարի օգտագործվող ջրածավալի քանակությանը՝ 11,000,000 մ³:

Իրականացված վարչական վարույթներ

- Շրջակա միջավայրի նախարարությունը *«Մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների*

հաշվառման նպատակով փվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման կարգերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 2207-Ն որոշման պահանջները 2024 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո ԲԸՏՄ է տրամադրել առցանց փոխանցման հնարավորությամբ ջրահաշվիչ սարքերի չտեղադրած և հարթակին չմիացված թվով 331 տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը: ԲԸՏՄ կողմից կատարված վերահսկողական աշխատանքների արդյունքում թվով 199 տնտեսվարող սուբյեկտ կատարել է ՀՀ կառավարության N 2207-Ն որոշման պահանջները, իսկ մնացած տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված ջրօգտագործման թույլտվությունները լիազոր մարմնի կողմից չեն համապատասխանեցվել վերը նշված ՀՀ կառավարության որոշմանը:

Արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է Շրջակա միջավայրի նախարարությանը, ինչպես նաև տեղեկացվել է վերահսկողական գործողությունների ընթացքի մասին, ըստ որի մնացած 132 տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված ջրօգտագործման թույլտվությունները լիազոր մարմնի կողմից չեն համապատասխանեցվել որոշման պահանջներին:

Իրականացված վերահսկողական գործառույթներ

ՀՀ վարչապետի 2024 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 02/42202-2024, ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի N47 և 2024 թվականի նոյեմբերի 28-ի N48 նիստերի ընթացքում տրված հանձնարարականների՝ ԲԸՏՄ կողմից ՀՀ մարզերում գործող ավտոլվացման կետերում իրականացրել է թվով 36 դիտարկում: Արդյունքում կասեցվել է 19 ավտոլվացման կետի գործունեությունը/գործողությունը, որից 9-ը խախտումները վերացնելու հիմքով կասեցումից հանվել են: Վերահսկողական աշխատանքները շարունակական են:

Ստուգումներով և դիտարկումներով հայտնաբերված ապօրինի ջրօգտագործում իրականացնելու հետևանքով կայացվել է թվով 80 գործունեությունը/գործողությունը կասեցնելու վերաբերյալ որոշում հետևյալ ոլորտներով՝ 29 ձկնաբուծություն, 4 ընդերքօգտագործում, 7 հասարակական սննդի կազմակերպում, 7 արտադրություն, 19 ավտոլվացման կետ, 14 ոռոգում, որոնցից 11-ի կասեցումը խախտումները վերացնելու հիմքով հանվել է հետևյալ ոլորտներում՝ 2 արտադրություն, 9 ավտոլվացման կետ:

Առավել հաճախ արձանագրված խախտումները

- առանց ջրօգտագործման թույլտվության ջրառի իրականացում
- ջրօգտագործման թույլտվությունների պայմանների և պահանջների խախտումներ

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

- ԲԸՏՄ աշխատակիցները ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկ կատարելիս հանդիպում են մի շարք խոչընդոտների, օրինակ՝ ծանր մետաղներով ջրային ռեսուրսին հասցված վնասի մեծության որոշման ժամանակ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ՏՄՀԳ առաջարկություն է ներկայացվել «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի 14 օգոստոսի N 1110-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ:

  Համայնքները ժամանակին միջոցներ չեն ձեռնարկել ջրօգտագործման թույլտվություններ ստանալու, ժամկետները լրացած ջրօգտագործման թույլտվությունները սահմանված կարգով երկարաձգելու, ջրաչափերի տեղադրման, կապարակնքման, գործունեությունը ՀՀ ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու համար և ջրային ռեսուրսներից չափաքանակները գերազանցող ջրառի համար չեն ներկայացվել համապատասխան հիմնավորումներ:

Խնդրի լուծման համար առաջարկություններ են ուղարկվել լիազոր մարմիններին և ՏԻՄ-երին:

2.3. Հողերի օգտագործում և պահպանություն, վտանգավոր նյութեր, արտադրություն ու սպառման թափոններ

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**328**
կայացվել է վարչական տույժի որոշում	**194**
նշանակվել է վարչական տուգանք	**14,290,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	241
հաշվարկվել է պատճառված վնաս	2,355,814,717 *դրամ*

Իրականացված ստուգումներ

Հողերի պահպանության և օգտագործման, վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների վերահսկողությունը ԲԸՏՄ իրականացնում է հողերը ջրային և

հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական նյութերով աղտոտումից, սողանքներից և հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից, հողի բերրի շերտի հանման, պահման և օգտագործման պահանջների նկատմամբ:

2024 թվականի ընթացքում հողերի պահպանության և օգտագործման, վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների վերաբերյալ իրականացված ստուգումներում և/կամ վարչական վարույթներում ընդգրկվել են հետևյալ ոլորտները

- Սպասարկում/ավտոսպասարկում, գազալցակայան, օդային տրանսպորտի օժանդակ ծառայություն՝ 19
- Թափոնների տեղադրում և ոչնչացում՝ 13,
- Ընդերքօգտագործում՝ 131,
- Պետության կառավարում և հասարակության սոցիալ--տնտեսական քաղաքականություն՝ 10
- Առողջապահություն՝ 3,
- Այլ ոլորտներ՝ 152:

Իրականացված վերահսկողական գործառույթներ

- Արմավիրի մարզի Արաքս խոշորացված համայնքում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ձկնաբուծական տնտեսություններ կառուցելու արդյունքում հողի բերրի շերտի վնասման վերաբերյալ ԲԸՏՄ կողմից իրականացվել են թվով 19 չափագրման աշխատանք և կատարվել է հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատում, ինչի արդյունքում հաշվարկվել է 17,900,099 ՀՀ դրամի չափով հողային ռեսուրսներին պատճառված վնաս:

  Նշված աշխատանքների ամբողջական նյութերը ուղարկվել են ՀՀ դատախազության Արմավիրի մարզի դատախազություն:
- 2024 թվականին Երևան քաղաքում 4 դեպքով (Արաբկիր վարչական շրջանի Կորեայի ձոր կոչվող տարածք՝ 3 դեպք և Նորք-Մարաշ վարչական շրջանի «Հրազդանի անտառտնտեսություն» Երևանի մասնաճյուղի տարածք՝ 1 դեպք) և Կոտայքի մարզում 4 դեպքով (Զովունի, Բյուրեղավան, Բալահովիտ – Մայակովսկի և Ակունք բնակավայրեր) հաշվարկվել է չնախատեսված վայրում աղբի կուտակման հետևանքով հողային

ռեսուրսին հասցված վնաս և գործերը հանձնվել է իրավապահ մարմիններին 8 դեպքով՝ ընդհանուր գումարը 2,053,682,961 ՀՀ դրամ:

- Կայացվել է թվով 1 գործունեությունը/գործողությունը կասեցնելու վերաբերյալ որոշում:

Առավել հաճախ արձանագրված խախտումներ

- Հողի բերրի շերտի աղբոտում, որը հիմնականում կապված է շինարարությունից առաջացած թափոնները ոչ սահմանված վայրերում տեղադրելու հետ:
- Հողի բերրի շերտի դեգրադացիա, որոնք հայտնաբերվել են հիմնականում ընդերքօգտագործման և ձկնաբուծության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների մոտ, մասնավորապես՝ չեն իրականացվել հողի բերրի շերտի հանման և պահպանման պարտավորությունները:
- Հողի բերրի շերտի օգտագործման կարգը:
- թափոնների անձնագրավորման բացակայություն,
- թափոնների սկզբնական հաշվառման բացակայություն,
- վտանգավոր թափոնների գործածության լիցենզիայի բացակայություն:
- թափոնների գոյացման նորմատիվների և չափաքանակների ձեռքբերման բացակայություն:

Իրականացված կանխարգելիչ միջոցառումներ

Համաձայն ԲԸՏՄ 2024 թվականի տարեկան գործունեության ծրագրի՝ ՀՀ մարզերում իրականացվել են հողի բերրի շերտի հանման և տեղափոխման նկատմամբ վերահսկողական միջոցառումներ, որոնց արդյունքում հայտնաբերվել է իրավախախտման 22 դեպք, ընդհանուր առգրավվել է 137.7 մ^3 հող, կիրառվել է վարչական տուգանք՝ 1,100,000 ՀՀ դրամի չափով:

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

Հայաստանի Հանրապետությունում աղբավայրերը հանդիսանում են հրդեհավտանգ օբյեկտներ, որտեղ պարբերաբար արձանագրվում են ինքնայրման դեպքեր՝ տարատեսակ վտանգավոր գազերի արտանետմամբ: Հիմնականում շահագործվում են չարտոնագրված աղբավայրեր, որտեղ չեն պահպանվում շահագործման կանոնները և չի իրականացվում աղբի տեսակավորում, ինչն էլ հետագայում հանգեցնում է աղբի ինքնայրման:

Խնդրի լուծման համար առաջարկվել է ՏԿԵՆ-ի կողմից գույքագրվեն վերը նշված դեպքերը և ՏԻՄ-ի միջոցով իրականացվեն հսկողական գործողություններ:

2.4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն

Կայացվել է թվով 4 (1 հատուկ պահպանվող տարածքում գործող բենզալցակայան, 1 ընդերքօգտագործում, 1 արտադրություն, 1 շինարարություն) գործունեությունը կասեցնելու վերաբերյալ որոշում:

3. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Իրականացված վերահսկողական աշխատանքներ

- *Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի խախտում.....286*
- *«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի խախտում.....65*
- *Հողային օրենսգրքի խախտում.....105*
- *«Թափոնների մասին» ՀՀ օրենքի խախտում.....26*
- *«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի խախտում.....32*
- *Հարկային օրենսգրքի խախտում.....75*
- *«Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի խախտում.... . . . . 28*
- *Ջրային օրենսգրքի խախտում. 6*
- *«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի խախտում. . . 64*
- *«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի խախտում. 3*

➢ Ընհանուր հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 3,583,739 397 ՀՀ դրամի չափով, որից

1) Հողային ռեսուրսներին պատճառված վնասը կազմել է 980,465 ,565 ՀՀ դրամ
2) Մթնոլորտային օդին պատճառված վնասը կազմում է 2,339,664,811 ՀՀ դրամ
3) Ջրային ռեսուրսներին պատճառված վնասը կազմում է 263,609,021 ՀՀ դրամ

➢ Հաշվարկվել է պետությանը պատճառված վնաս՝ 1,691,540,200 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից ապօրինի արդյունահանված օգտակար հանածոյի ծավալի հիման վրա միայն 43 դեպքով):

Իրականացված ստուգումներ

2024 թվականի ընթացքում իրականացվել են 87 ստուգում, որից 78-ը ավարտվել են (26 տարեկան ծրագիր, 61 արտածրագրային), 8-ը գտնվում է ընթացքում, իսկ 1 ընկերությունում հանձնարարագրերն ուժը կորցրած են ճանաչվել:

Ներքոնշյալ տվյալների մեջ են մտնում նաև 2023 թվականին սկսված, սակայն 2024 թվականին ավարտված ստուգումների տվյալները:

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**690** *հատ*
կայացվել է վարչական տույժի որոշում	**206** *հատ*
նշանակվել է վարչական տուգանք	32,040,000 *դրամ*
հաշվարկվել է պատճառված վնաս	2,633,378,014 *դրամ*

Հայտնաբերվել է ապօրինի արդյունահանման 42 դեպք, որից 38-ը ոչ մետաղական, իսկ 4-ը մետաղական հանքավայրերում:

- 38 դեպքով ապօրինի և թաքցված ծավալը կազմում է 803,841. 8 մ^3
- 4 մետաղական հանքավայրերում ստուգման արդյունքում հայտնաբերված ապօրինի արդյունահանված և թաքցված ծավալներն ըստ տեսակների՝
    - Հանքաքար 21,237,390 կգ
    - Ոսկի 1,891 կգ
    - Արծաթ 3,472 կգ
    - Սելեն 1,090 կգ
    - Թելուր 5,530 կգ
    - Պղինձ 22,260 կգ
    - Ցինկ 152,830 կգ
    - Կապար 17,890 կգ

3.1. Ընդերքի շահագործման վերահսկողություն

Իրականացվել է 57 ստուգում, որից 22-ը տարեկան ծրագրով, 35-ը արտածրագրային ստուգում, 50 ստուգում ավարտվել է, 6–ը գտնվում է ընթացքի մեջ, իսկ 1 ընկերությունում հանձնարարագիրը ուժը կորցրած է ճանաչվել:

Ներքոնշյալ տվյալների մեջ են մտնում նաև 2023 թվականին սկսված, սակայն 2024 թվականին ավարտված ստուգումների տվյալներ:

Ավարտված 50 ստուգման արդյունքում կազմվել է 50 ստուգման ակտ: Տրվել է խախտումները վերացնելու 24 հանձնարարական:

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**554**
կայացվել է վարչական տույժի որոշում	**165**
նշանակվել է վարչական տուգանք	**25,960,000** *դրամ*
հաշվարկվել է պատճառված վնաս	**2,632,545,885** *դրամ*

ՊԵԿ-ի կողմից ապօրինի արդյունահանված օգտակար հանածոյի ծավալի հիման վրա միայն 25 դեպքով հաշվարկվել է պետությանը պատճառված վնաս՝ 1,249,049,295 ՀՀ դրամ:

3.2. Հանքային ջրերի և երկրաբանական ուսումնասիրությունների վերահսկողություն

Իրականացվել է 30 ստուգում, որից 4-ը տարեկան ծրագրով, 26 արտաժրագրային ստուգում, 28-ը ավարտվել է, իսկ 2-ը գտնվում է ընթացքի մեջ:

Ավարտված 28 ստուգման արդյունքում կազմվել է 28 ստուգման ակտ:

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**136**
կայացվել է վարչական տույժի որոշում	**41**
նշանակվել է վարչական տուգանք	**6,080,000** *դրամ*
հաշվարկվել է պատճառված վնաս	**832,129** *դրամ*

30 ստուգումից՝ 26-ի հիմքն է հանդիսացել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությունները, կապված՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.5-րդ մասի համաձայն առաջնային երկրաբանական փաստագրման նյութերի և փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատականի, ինչպես նաև դրանց արժանահավատության հավաստումների հետ:

Հայտնաբերված ոչ մետաղական օգտակար հանածոյի ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի վերաբերյալ

2024 թվականի ԲԸՏՄ կողմից հայտնաբերվել է ապօրինի ընդերքօգտագործման և արդյունահանված ծավալները թաքցնելու 144 դեպք, որից 38-ը հայտնաբերվել է

ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններում իրականացված ստուգումների արդյունքում, իսկ 106-ը ԲԸՏՄ նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում:

Ընդհանուր հայտնաբերված ոչ մետաղական ապօրինի արդյունահանման ծավալը կազմում է 4,630,603. 7 մ^3:

Ստորև ներկայացվում է ստուգումների և վարչական վարույթի շրջանակներում հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման և արդյունահանված ծավալները թաքցնելու 144 դեպքերը՝ ըստ մարզերի և օգտակար հանածոյի.

Աղյուսակ 25

Հ/Հ	Մարզ	Դեպքերի քանակ	Ծավալ մ^3
1	Արմավիր	31	534,804. 0
2	Արագածոտն	11	218,153. 5
3	Արարատ	23	726,524. 9
4	Գեղարքունիք	17	397,688. 4
5	Լոռի	17	240,966. 0
6	Կոտայք	18	572,523. 6
7	Շարակ	7	1,703,091. 7
8	Սյունիք	10	142,733. 8
9	Վայոց ձոր	4	42,110. 0
10	Տավուշ	3	40,590. 0
11	Երևան	3	11,477. 4
Ընդհանուր		144	**4,630,663. 3**

Աղյուսակ 26

Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Դեպքերի քանակ	Ծավալ մ^3
1	Բազալտ	29	1,224,632. 8
2	ԱԿԽ	60	2,360,453. 4
3	Հողագրունտ	17	340,552
4	Սևահող	1	303
5	Խճաքար	4	58,989
6	Գաբբրո	2	2,177. 5
7	Խարամ	2	173,835. 7
8	Տուֆ	8	90,930. 4
9	Տրավերտին	7	8,363. 6
10	Պեռլիտ	1	6,676
11	Լիթոիդային պեմզա	3	192,178. 8
12	Կավ	5	16,681. 1
13	Գրանիտ	2	132,917
14	Գրանոդիորիտ	1	466
15	Կրաքար	1	15,012
16	Օբսիդիան	1	6,495
Ընդհանուր		144	**4,630,663. 3**

ԲԸՏՄ նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում հայտնաբերված 106 ապօրինի արդյունահանման դեպքերով հաշվարկված օգտակար հանածոյի ծավալը կազմում է 3,826,821. 5 մ^3: Նշված 106 դեպքերով ԲԸՏՄ կողմից հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասը կազմում է 115,813,610 ՀՀ դրամ:

Աղյուսակ 27

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Արմավիր	1	տուֆ	11,350.0	16,309.0	2.0
	2	հող	77,072.0	0.0	1.0
	3	կավ	3,770.0	24,897.0	1.0
	4	ԱԿԽ	435,886.0	56,554,748.0	26.0
		Ընդհանուր	528,078.0	56,595,954.0	30.0

Աղյուսակ 28

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Արագածոտն	1	հող	78,832.0	0.0	3.0
	2	ԱԿԽ	3,805.0	0.0	1.0
	3	օբսիդիան	6,495.0	0.0	1.0
		Ընդհանուր	89,132.0	0.0	5.0

Աղյուսակ 29

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Արարատ	1	հող	20,672.0	0.0	1.0
	2	ԱԿԽ	638,649.3	21,647,718.0	13.0
	3	խճաքար	58,922.0	0.0	3.0
	4	տրավերտին	1,875.1	0.0	1.0
		Ընդհանուր	720,118.4	21,647,718.0	18.0

Աղյուսակ 30

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Գեղարքունիք	1	բազալտ	38,097.0	0.0	2.0
	2	գաբբրո	395.0	0.0	1.0
	3	հող	437.0	0.0	1.0
	4	ԱԿԽ	42,065.0	8,686,779.0	10.0
		Ընդհանուր	80,994.0	8,686,779.0	14.0

Աղյուսակ 31

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Լոռի	1	խճաքար	67. 0	0. 0	1. 0
	2	բազալտ	7,824. 0	808,635. 0	2. 0
	3	ԱԿԽ	5,080. 0	16,779. 0	3. 0
	4	գրանիտ	124,272. 0	19,923,776. 0	1. 0
	5	կավ	2,303. 0	0. 0	1. 0
	6	սևահող	303. 0	0. 0	1. 0
	7	հող	9,795. 0	708,815. 0	4. 0
		Ընդհանուր	149,644. 0	21,458,005. 0	13. 0

Աղյուսակ 32

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Կոտայք	1	ԱԿԽ	44,510. 1	0. 0	3. 0
	2	բազալտ	30,095. 0	0. 0	2. 0
	3	կավ	522. 0	0. 0	1. 0
	4	լիթոիդային պեմզա	164,576. 0	0. 0	2. 0
	5	հող	123,762. 0	0. 0	5. 0
		Ընդհանուր	363,465. 1	0. 0	13. 0

Աղյուսակ 33

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Շիրակ	1	ԱԿԽ	795,762. 0	0. 0	1. 0
	2	տուֆ	1,180. 0	11,058. 0	2. 0
	3	բազալտ	895,053. 0	476,460. 0	1. 0
		Ընդհանուր	1,691,995. 0	487,518. 0	4. 0

Աղյուսակ 34

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Սյունիք	1	կավ	9,363. 0	32,816. 0	1. 0
	2	ԱԿԽ	103,839. 0	567,834. 0	1. 0
	3	բազալտ	7,710. 0	3,492,586. 0	2. 0
		Ընդհանուր	120,912. 0	4,093,236. 0	4. 0

Աղյուսակ 35

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Վայոց ձոր	1	հող	4,539. 0	2,737,000. 0	1. 0
	2	ԱԿԽ	122. 0	0. 0	1. 0
	3	բազալտ	37,367. 0	0. 0	1. 0
		Ընդհանուր	42,028. 0	2,737,000. 0	3. 0

Աղյուսակ 36

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Տավուշ	1	25,443. 0	0. 0	1. 0	25,443. 0
	2	15,012. 0	107,400. 0	1. 0	15,012. 0
		Ընդհանուր	40,455. 0	107,400. 0	2. 0

Աղյուսակ 37

Հ/Հ	Մարզ	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
1	Արմավիր	528,078. 0	56,595,954. 0	30. 0
2	Արագածոտն	89,132. 0	0. 0	5. 0
3	Արարատ	720,118. 4	21,647,718. 0	18. 0
4	Գեղարքունիք	80,994. 0	8,686,779. 0	14. 0
5	Լոռի	149,644. 0	21,458,005. 0	13. 0
6	Կոտայք	363,465.1	0. 0	13. 0
7	Շիրակ	1,691,995. 0	487,518. 0	4. 0
8	Սյունիք	120,912. 0	4,093,236. 0	4. 0
9	Վայոց ձոր	42,028. 0	2,737,000. 0	3. 0
10	Տավուշ	40,455. 0	107,400. 0	2. 0
11	Երևան	0. 0	0. 0	0. 0
Ընդհանուր		3,826,821. 5	115,813,610. 0	106. 0

Վերոնշյալ բոլոր դեպքերով նյութերն ուղարկվել են Իրավապահ մարմիններին՝ հետագա ընթացքն ապահովելու համար:

Միաժամանակ, Քննչական կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ ԲԸՏՄ կողմից ներկայացված հաղորդումների հիման վրա Քննչական կոմիտեի կողմից հարուցված քրեական վարույթների շրջանակներում 2023-2024 թվականների ընթացքում հաշվարկված պետությանը պատճառված վնասը կազմում է 4,491,100,454 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 526,223,955 ՀՀ դրամ:

Արաքսի ավազանում իրականացված միջոցառումներ

ԲԸՏՄ և Ազգային անվտանգության աշխատակիցներն իրենց լիազորությունների շրջանակներում վերահսկողական կանխարգելիչ գործառույթներն իրականացնելու ընթացքում 2024 թվականի հուլիսի 1-ից 19-ը ընկած ժամանակահատվածում Արմավիրի և Արարատի մարզերում ՀՀ սահմանով հոսող Արաքս գետի երկայնքով՝ Արմավիրում Արաքս համայնքից մինչև Բագարան համայնքը, Արարատում Ռանչպար համայնքից մինչև Երասխ

համայնքը, իրականացրել են տեսա և լուսանկարահանման աշխատանքներ: Ընդհանուր 142 կմ, որից՝ Արմավիրի մարզում ընդհանուր մոտ 75 կմ երկարությամբ և Արարատի մարզում 67 կմ երկարությամբ:

Արմավիրի մարզի Արաքս գետի ողողատում գտնվող ավազի արդյունահանման թույլտվության և լեռնահատկացման տեղամասերում իրականացվել են չափագրման աշխատանքներ, ընդհանուր մոտ 20 կմ երկարությամբ տարածքում չափագրվել է մոտ 600 հեկտար տարածք և Արարատի մարզի Արաքս գետի ողողատում գտնվող ավազի արդյունահանման թույլտվության և լեռնահատկացման տեղամասերում չափագրվել է մոտ 195 հեկտար տարածք: Ընդհանուր չափագրվել է 795 հեկտար տարածք:

Վերահսկողության արդյունքում պարզվել է, որ Արաքս գետի ափամերձ հատվածի սահմանային գոտում ընդհանուր 39,107 մ^2 մակերեսով տարածքից տեղահանել է 57,258 մ^3 ծավալով ավազակոպճային խառնուրդի լեռնային զանգված:

Միաժամանակ, ԲԸՏՄ, Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների և ռուսական սահմանապահ ծառայողների կողմից համատեղ ամենամսյա պարբերականության շրջայց է իրականացվում Արմավիրի և Արարատի մարզերի Արաքս գետի ողջ երկայնքով:

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողություններ

ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի N 730-Լ որոշման հավելված 2-ով հաստատված՝ Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողությունների պլանի համաձայն 2024 թվականին նախատեսված միջոցառումների իրականացման և ԲԸՏՄ տարեկան ծրագրով նախատեսված միջոցներով 2024 թվականին ձեռք է բերվել ստորգետնյա DJI Matrice 300 RTK (M300 RTK) Lidar և վերգետնյա Matrice 300 RTK միջավայրում աշխատող համակարգեր և այդ համակարգերն աշխատացնող համապատասխան ծրագրեր:

- DJI Matrice 300 RTK (M300 RTK) Lidar-ը օգտագործվում է լիդար (Lidar) սենսորների հետ համատեղ՝ իրականացնելով բարձր ճշգրտության 3D քարտեզագրում և չափում: Այս անօդաչու թռչող սարքը նախագծված է Matrice 300 RTK մոդելի հիման վրա, որը թույլ է տալիս կատարել մանրամասն քարտեզագրումներ ու 3D մոդելներ, բարձր ճշգրտությամբ քարտեզագրում, չափագրում և մոնիթորինգ:

- CHCNAV RS 10-ը միավորում է GNSS RTK, լազերային սկանավորման և տեսողական SLAM տեխնոլոգիաները մեկ հարթակի մեջ: Այս համադրումը մեծացնում է ներքին և արտաքին 3D սկանավորումը: Քարտեզագրման, BIM-ի, անտառային տնտեսության, ստորգետնյա քարտեզագրման համար՝ RS10-ը ապահովում է բարձր արդյունավետություն և ճշգրտություն:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է անօդաչու թռչող սարքերի կիրառման համար անհրաժեշտ ծրագրերի (Օրթո և Լիդար) և վերլուծական գործիքների ուսուցում:

Դրանք հզոր ֆոտոգրաչափական ծրագրեր են, որոնք օգտագործվում են օդային և ցամաքային պատկերները բարձրորակ 3D մոդելների, օրթոֆոտոների և այլ աշխարհատարածական արտադրանքների ֆոտոգրամետրիկ մշակման համար: Այն փոխակերպում է լուսանկարները 3D տարածական տվյալների՝ ստեղծելով խիտ կետային ամպեր, տեքստուրային ցանցեր և թվային բարձրության մոդելներ (DEM), որը թույլ է տալիս արտաքին GPS/IMU տվյալների ինտեգրում աշխարհատարածական ճշգրիտ դիրքորոշման համար:

Առավել հաճախ արձանագրված խախտումները

Վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրվել են ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի շեղումներ, մասնավորապես.

- ընդերքօգտագործման աշխատանքներն իրականացվել են առանց հողատարածքի օգտագործման պայմանագրի և/կամ առանց հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու: Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանված է, որ ընդերքի օգտագործման իրավունք ստացած անձը չի կարող սկսել հանքարդյունահանման աշխատանքներն առանց տվյալ տարածքի սեփականատիրոջ համապատասխան համաձայնության կամ հողատարածքի օգտագործման պայմանագրի:
- ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող ընկերությունները ընդերքօգտագործման ընթացքում չեն ապահովում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքությունը, օգտակար

հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների կատարումը: Երկրաբանական և մարկշեյդերական քարտեզագրումները (երկրաբանական քարտեզներ՝ երկրակեղևի որևէ տեղամասի երկրաբանական կառուցվածքը արտահայտող գծագրեր, մարկշեյդերական գործ՝ հանքափորվածքներում կատարված տարածական-երկրաչափական չափումների տվյալները՝ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ժամանակ ու դրանց փաստաթղթավորումը) ունեն առանցքային նշանակություն հանքարդյունաբերության մեջ:

- ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից չեն պահպանվում հանքերի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծով սահմանված հանքաստիճանի և հանքախորշի բարձրությունը, լայնությունը, խորությունը և երկարությունը:

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

- Ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից չեն ներկայացվում ընդերքօգտագործման վճարների (պետական տուրքերի), «Օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» Ձև N 70-ՏԱ»և «Օգտակար հանածոների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների և արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» Ձև N 71-ՏԱ» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունները:

Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծերի բոլոր այս խախտումները հանգեցնում են հանքերի ոչ ճիշտ և լիարժեք շահագործմանը, որի համար առաջարկվել է կարգավորել օրենսդրական բացերը՝ սահմանելով խիստ պատասխանատվության միջոցներ: Միաժամանակ առաջարկվել է երկրաբանական և այլ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և ներկայացման նպատակով տեղեկատվությունը թվայնացնել և ստեղծել կառավարման ավտոմատ տեղեկատվական համակարգ:

- Համայնքի ավագանու կամ ղեկավարի որոշմամբ առանց ընդերքօգտագործման իրավունքի առկայության տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվում է համայնքային հողամասերի սահմաններում պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական

օգտակար հանածոների արդյունահանման, քարհավաքման և սելավատարերի մաքրման աշխատանքների թույլտվություն՝ առանց լիազոր մարմնին տեղյակ պահելու:

Նշված դեպքերում առաջարկվել է խստագույնս առաջնորդվել Կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում ընդերքօգտագործման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1932-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 152-Ն որոշման պահանջներով:

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ԼՀԲ իրականացվել է 758 անալիտիկ հետազոտություն, որից

- ջրի 73 նմուշի 568 անալիզ
- հողի 54 նմուշի 190 անալիզ
- իրականացվել է մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի և փոշու 263 չափագրում, որից 83-ը փոշի, 180-ը՝ գազային միացություններ: Փոշու սահմանային թույլատրելի արտանետումների չափաքանակները մինչև 5 անգամ գերազանցել են 20 նմուշ, 5-ից ավել անգամ՝ 8 նմուշ, ինչը պայմանավորված է փոշենստեցման և փոշեկլանման միջոցառումների չիրականացմամբ:

Ջրի նմուշներում որոշված 568 պարամետրերից 14 պարամետր գերազանցել են սահմանային թույլատրելի արտահոսքը մինչև 5 անգամ, 6 պարամետր՝ 5-ից ավել անգամ:

Նույնականացման նպատակով անալիտիկ հետազոտություններ են իրականացվել հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման կանխարգելիչ միջոցառումների ընթացքում նմուշառված հողերի նմուշներում:

Կատարված հետազոտությունները՝ ըստ 2022-2024 թվականների համեմատականի

Աղյուսակ 38

Տարի			2022	2023	2024
Մթնոլորտային օդի	**քանակը**		**49**	**115**	**263**
	ՍԹԱ չափաքանակնեը գերազանցել է	մինչև 5 անգամ	6	7	22
		5 և ավել անգամ	0	5	8
Ջրի	**քանակը**		**479**	**585**	**568**
	ԹՍԱ չափաքանակները գերազանցել է	մինչև 5 անգամ	47	89	12
		5 և ավել անգամ	57	89	6
Հողի	**քանակը**		**36**	**264**	**190**
	վնասակար նյութերի պարունակությունը գերազանցել է ՍԹԿ		0	0	0

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- ԲԸՏՄ գործունեության վերաբերյալ, ըստ ոլորտների տարեկան ծրագրով նախատեսված 40 իրազեկման աշխատանքի փոխարեն կատարվել է 167-ը, այդ թվում՝ 94-ը մամուլի հաղորդագրություն, տեղեկատվական 18 նյութ, թափուր պաշտոնի մասին 55 հայտարարություն:

Աղյուսակ 39

Տարեթիվ	Նախատեսված	Իրականացված	ԶԼՄ-ներում տարածում
2022	15	90	1373
2023	15	216	1486
2024	40	167	2087

Յութուբյան ալիքի ԲԸՏՄ էջում պատրաստվել և/կամ հրապարակվել է 32 տեսահոլովակ/տեսանյութ: (2023թ.-ին՝ 39, 2022թ.-ին՝ 63):

Ամենօրյա մոնիտորինգի արդյունքներով ուսումնասիրվել է ոլորտի վերաբերյալ 1,772 նյութ, որոնք ամփոփվել և վերլուծվել են, պատրաստվել է օրվա մամուլի տեսություն, ստեղծվել համակարգված արխիվ: (2023թ.-ին՝ 1,354, 2022թ.-ին՝ 1,242):

- 2024թ. հունվարի 10-ին Արմենպրես լրատվական գործակալությունում կազմակերպվել է 2023թ.-ի ընթացքում ԲԸՏՄ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփիչ ասուլիս, որին անդրադարձել է 48 լրատվամիջոց:

  ԲԸՏՄ ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ նախատեսված 4 հարցազրույցի փոխարեն կազմակերպվել է 28-ը, որից Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվել է 21-ը, հարցազրույցներ են տրվել նաև Հայաստանի հանրային ռադիոյին, Ժողովուրդ, Ֆակտոր, Պանորամա, Արմենպրես, Ալիքմեդիա, Օրագիր նյուզ և այլ ԶԼՄ-ների: (2023թ.-ին նախատեսվել է 4, իրականացվել՝ 23, 2022թ.-ին նախատեսվել է 4, իրականացվել՝ 45):

1. Երևանում կազմակերպվել է երկու իրազեկում-հանդիպում՝ մայրաքաղաքում գործունեություն իրականացնող խոշոր շինարարական, ընդերքօգտագործող ընկերությունների 29 ներկայացուցչի հետ: Հանդիպումներին ներկա են եղել ԲԸՏՄ ղեկավար կազմը, Երևանի քաղաքապետարանի և Կառուցապատողների հայկական ասոցիացիայի պատասխանատուներ: Քննարկվել է օդի աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումները, շինարարական հրապարակների կահավորման վերաբերյալ հարցերը, առաջարկվել են լուծումներ, տրամադրվել իրազեկման թերթիկներ, բուկլետներ: Հանդիպումը լուսաբանվել է Հանրային հեռուստաընկերությամբ:

   - ԲԸՏՄ ոլորտային և տարածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են իրազեկում-հանդիպումներ (1-ական) Արարատի, Վայոց ձորի, Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզերում ԲԸՏՄ վերահսկողության ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների, բնապահպանների և հասարակական կազմակերպությունների 87 ներկայացուցչի հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ», «Ջրային», «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքերում, «Բնապահպանական վերահսկողության

մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքներում, ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխություններն ու լրացումները: Քննարկվել են թափուկ փայտանյութի բացթողնման, հատատեղերի տեղադրման ու շահագործման, անտառային տարածքներում ճանապարհների կառուցման, հիմնանորոգման և շահագործման հիմնախնդիրները, ջրային ռեսուրսների, համայնքային հողերի պահպանության, ինչպես նաև փոշու արտանետումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ հարցեր: Տրամադրվել են ուղեցույցեր, իրազեկման թերթիկներ, բուկլետներ:

2. ՀՀ կառավարության նիստերի ընթացքում Վարչապետի կողմից պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին տրված հանձնարարականների կատարումն ապահովելու նպատակով 2024 թվականին ԲԸՏՄ ղեկավարը և ղեկավարի տեղակալները բազմակի մարզային այցելությունների շրջանակում տարաբնույթ հանդիպումներ են ունեցել ՀՀ բոլոր մարզերում:

- Հանդիպումների ընթացքում մարզպետների, համայնքի ղեկավարների և այլ շահագրգիռ անձանց հետ քննարկվել են ջրային ռեսուրսների պահպանման, ջրային համակարգերի արդյունավետ կառավարման ու բարելավման հիմնական միջոցառումները, ՀՀ ջրային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում ջրառի կետերում առցանց ջրաչափերի տեղադրման գործընթացի, հողագրունտի հանույթի օգտագործման և տեղափոխման, ընդերքօգտագործման, հանքշահագործման, տարածքից դուրս օգտակար հանածոների ապօրինի արդյունահանման, շինաշխատանքների ու սորուն նյութերի տեղափոխման և պահեստավորման ընթացքում փոշու արտանետումների նվազեցման, խոզանների և գյուղատնտեսական հանդակներում բուսածածկույթի այրման դեպքերի բացառման, անտառահատումների վերահսկողությանն ուղղված մի շարք հարցեր:
- Տեղերում ԲԸՏՄ ղեկավարի տեղակալների, տարածքային բաժինների, ինչպես նաև մարզպետների աշխատակազմերի, տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմամբ շրջայցերի ընթացքում արձանագրվել են շրջակա

միջավայրի պահպանության նորմերի խախտումներ թափոնների ոլորտում՝ համայնքային հողերի պահպանության և դրանց նպատակային նշանակության կիրառման ուղղություններով (ճամփեզրերին կենցաղային թափոններ ու շինարարական աղբ, ավտոմեքենաների ջարդոններ ու թափքեր, հողի, ավազի թմբեր, քարակույտերի կուտակումներ): Վերհանված խախտումների և գույքագրված խնդիրների վերաբերյալ գրավոր և բանավոր հաղորդումներ են ուղարկվել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորությունների շրջանակում միջոցներ ձեռնարկելու համար:

- Մարզային այցելությունների ընթացքում ստուգայցերի շրջանակում զուգահեռ իրականացվել են ջրային ռեսուրսների նորմերի պահպանությանն ուղղված միջոցառումներ, որոնց ընթացքում ուսումնասիրվել են մայթերի եզրերին ու ճամփեզրերին տեղակայված ավտոլվացման կետեր:

3. Տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացման, իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկման ապահովման, բնապահպանության և ընդերքի ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման, հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով ներկայացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում և այլ իրավական ակտերում լրացումների և փոփոխությունների վերաբերյալ 13 հրապարակում, մասնավորապես՝

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության պահանջների խախտմամբ գործունեություն իրականացնելը:
- Հողերի պահպանության կանոնները խախտելը:
- Վերահսկողություն իրականացնող ԲԸՏՄ վերահսկողության իրականացումը խոչընդոտելը:
- Առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործում իրականացնելը կամ ջրօգտագործման թույլտվության պահանջները չկատարելը (ջրօգտագործման թույլտվությամբ ամրագրված ջրառի և էկոլոգիական թողքի կետերում ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման պահանջները չկատարելը,

ձկնաբուծարաններում առանց փակ շրջանառու համակարգի ստորերկրյա ջրերի օգտագործումը):

- «Հողի բերրի շերտի օգտագործման» կարգը խախտելը:
- Պետական արգելոցի, արգելավայրի, ազգային պարկի, բնության հուշարձանի կամ պետության կողմից հատուկ պահպանվող բնական այլ տարածքի կամ օբյեկտի ռեժիմը խախտելը:
- Ավտոտրանսպորտային միջոցներով շինարարական նյութերի և աղբի տեղափոխման ժամանակ մթնոլորտային օդի պահպանության պահանջների չկատարելը:
- Խոզանները, բուսածածկ տարածքներն այրելը:
- Մակերևութային ու ստորերկրա ջրային ռեսուրսներից առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործում իրականացնելը:
- Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի և ձկնորսության, ինչպես նաև կենդանական աշխարհից օգտվելու մյուս կանոնները խախտելը:
- Արտադրության և սպառման, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոնները բնական միջավայրում այրելը:

4. Օդի աղտոտման նվազեցմանն ուղղված միջոցառումների շրջանակում պատրաստվել է հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ տեսահոլովակ, և շինհրապարակներում փոշու արտանետումների կանխարգելման վերաբերյալ 45 վայրկյան տևողությամբ սոցիալական-տեղեկատվական տեսահոլովակ, որը շուրջ 1 ամիս հեռարձակվել է Հանրային հեռուստատեսությամբ:
5. Մարզերում շինարարական աշխատանքներ իրականացնող և ընդերքօգտագործող 337 տնտեսավարող սուբյեկտ ծանուցվել է փոշու արտանետումների կանխարգելման, մթնոլորտային օդի պահպանության կանոնների վերաբերյալ իրազեկման թերթիկով:
6. Սևանա լճում և ՀՀ ողջ տարածքում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումների, ապօրինի որսի, ապօրինի ծառահատումների և փայտանյութի, առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի, հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման կանխարգելիչ ստուգայցերի ընթացքում

իրականացվել են իրազեկման և բացատրական աշխատանքներ ու տրամադրվել իրազեկման թերթիկներ:

7. 2023թ. և 2024թ. 1-ին կիսամյակի ընթացքում ԲԸՏՄ ստացված վարչական վարույթների, դիմում-բողոքների, ահազանգերի վերաբերյալ վիճակագրական տվյալները հրապարակվել են ԲԸՏՄ պաշտոնական կայքէջում (հղում՝ https://www.ecoinspect.am/hy/statistics):

Ահազանգերի թվաքանակ

Աղյուսակ 40

Տարեթիվ	Ահազանգերի քանակ	Թեժ գծով	Սոց ցանցեր ՀԼՄ հրապարակումներ
2022	219	151	68
2023	391	276	115
2024	550	430	120

Թեժ գծով ստացված ահազանգերն ըստ ուղղությունների

Աղյուսակ 41

Տարեթիվ	Ահազանգերի քանակ	Կենսաբազմա-զանություն	Շրջակա միջավայր	այլ	Խորհրդատ-վություն
2022	151	44	19	11	77
2023	276	40	120	34	82
2024	430	34	241	-	155

Սոց ցանցեր ՀԼՄ հրապարակումների հիման վրա գրանցված ահազանգերն ըստ ուղղությունների

Աղյուսակ 42

Տարեթիվ	Ահազանգերի քանակ	Կենսա-բազմազանություն	Շրջակա միջավայր
2022	68	39	29
2023	115	51	64
2024	120	36	84

8. ԲԸՏՄ պաշտոնական կայքէջում թարմացվել են «Կառուցվածք», «Օրենսդրություն», «Հաշվետվություններ», «Գործունեության ծրագիր», «Կառավարման խորհուրդ», «Նորություններ», «Թափուր պաշտոններ», «Իրազեկում», «Տեսանյութեր» և այլ բաժինները: Ապահովվել է տեղեկատվության հասանելիությունը, հետադարձ կապը,

ԲԸՏՄ գործունեության թափանցիկությունը: ԲԸՏՄ պաշտոնական էջում տեղադրվել են մամուլի հաղորդագրություններ, տեսանյութեր, հաշվետվություններ, իրազեկումներ, հայտարարություններ և այլն:

9. Սոցիալական ցանցի ԲԸՏՄ պաշտոնական էջի հետևորդների թիվը 2024թ-ին կազմել է՝ 7,241 (2023թ-ին՝ 7,044-ի, 2022թ-ին՝ 6,470):

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀՀ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Կարողությունների զարգացման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների (CNF և WWF) հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու և ամրապնդելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք միջազգային կառույցների հետ ձեռք է բերվել փոխհամագործակցության պայմանավորվածություններ՝ ԲԸՏՄ կարողությունների զարգացման, տեղեկատվության փոխանակման, մասնագետների վերապատրաստման, տեխնիկական աջակցության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Կովկասի Բնության Հիմնադրամի կողմից ԲԸՏՄ նվիրաբերվել է 4,879,000 ՀՀ դրամ գումարի չափով գույք, մասնավորապես՝

1 Լադա Նիվա ավտոմեքենա՝ գազաբալոնային համակարգով և աքսեսուարներ:

Լաբորատոր հագեցվածության ապահովում

ԲԸՏՄ 2024 թվականի ընթացքում ձեռք է բերել սարքավորումներ, որոնք հնարավորություն են տալիս տեղում արձանագրելու վնասակար նյութերի չափաքանակները.

 Փոշու անալիզատոր CEM DT 9881, որը հնարավորություն է տալիս մթնոլորտային օդում չափելու PM2.5 և PM10 տրամաչափերով փոշու մասնիկները, ածխածնի օքսիդի և ֆորմալդեհիդի քանակությունները	 Ամոնիակի անալիզատոր ՄԵԳԵՕՀ 08085, որը հնարավորություն է տալիս մթնոլորտային օդում չափագրելու ամոնիակի քանակությունը
 Ջրի դաշտային անալիզատոր HORIBA, որը դաշտային պայմաններում ջրում միանգամից որոշում է 11 պարամետր	 Ջրի նմուշառիչ ՊԷ 1110, որը հնարավորություն է տալիս մեծ խորություններից կատարել արտահոսքի և մակերևութային ջրերի նմուշառում

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Շարունակվել է ԲԸՏՄ և ՀՀ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության կրթահամալիրի հետ ձեռք բերված համագործակցությունը:

ՆԳՆ կրթահամալիրի շարունակական համագործակցության շրջանակում ԲԸՏՄ 28 պետական տեսուչ մասնակցել է ծառայողական զենքի օգտագործման հատուկ պատրաստվածության, ինչպես նաև 30 աշխատողները Ոստիկանության կրթահամալիրում մասնակցել են վերապատրաստման դասընթացներին հետևյալ թեմաներով.

- Բնապահպանական վերահսկողության շրջանակներում վարչարարության հասկացությունը և էությունը,

- Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի շրջանակներում վարչական վարույթի առանձնահատկությունները,
- Բնապահպանական վերահսկողության ոլորտում զանցանքի և հանցագործության հասկացությունը, հատկանիշները, տարբերությունները և առանձնահատկությունները,
- Բնապահպանական վերահսկողության ոլորտում վարչական իրավախախտումների գործերով վարույթի կարգը,
- Բնապահպանական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմնի քննությանը ենթակա վարչական իրավախախտումները,
- Վնասի հատուցման պահանջը ներկայացնելու որոշման կարգը, առանձնահատկությունները և հիմքը,
- Բնապահպանական վերահսկողության ոլորտում վարչական պատասխանատվությունը ՀՀ-ում,
- Իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող առարկաների և գործիքների բռնագրավման մասին տույժ կիրառել և դրա կատարման կարգը,
- Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, վարչական իրավախախտումներից, դրանց սահմանազատման առանձնահատկությունները:

Ուսումնառության վերջում ԲԸՏՄ աշխատողները հանձնել են ստուգարքներ վերը նշված թեմաներով:

Պայմանագրի շրջանակներում ԲԸՏՄ 2 աշխատող ուսուցանել են անօդաչու սարքի թռիչքային մասերին և կից ծրագրային ապահովումներին:

ԲԸՏՄ և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակում կազմակերպվել է 10 տեսուչի վերապատրաստում «Ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառումը վերահսկողության ոլորտում» թեմայով.

- Ծանոթագրություն ԱԹՍ-ների ակտուալ մոդելների հետ: ԱԹՍ-ների (արգելված թռիչքային տարածքների) սահմանափակումների արգելաբացման հնարավոր տեսակների դիտարկում,

- ԱԹՍ-ների օդաչուների ծրագրի բեռնում բջջային հեռախոսների մեջ, հեռակառավարման վահանակների միացում հեռախոսներին: Առաջին թռիչքից առաջ խորը կարգավորումների հնարավորությունների դիտարկում, վահանակներից ծրագրից և ԱԹՍ-ներից օգտվելու մանրամասն կանոնները և հնարավորությունները,
- Անվտանգության կանոնների ներկայացում: ԱԹՍ-ների պրակտիկ թռիչքներ,
- Ինչ է ֆոտոգրամետրիան, կիրառման ոլորտները, ինչից է կազմված, ինչ հնարավորություններ ունի և ինչ հնարավորություններ չունի: Անհրաժեշտ նկարահանման մեթոդներ, նկարահանման տեսակներ հատուկ ֆոտոգրամետրիայի համար,
- Պրակտիկ թռիչք և նկարահանում: Նկարահանված մատերիալների ճիշտ արտահանում համակարգիչների մեջ հետագա վերամշակման համար,
- Կետային ամպերի, տեքստուրաների, և պոլիգոնների մշակման տեսակների վերաբերյալ մանրամասներ: Ծանոթություն Agisoft Metashape ծրագրին, անվճար տրամադրում, նախորդ թեմայով նկարահանված մատերիալների վերամշակման պրակտիկ փորձեր,
- Agisoft Metashape-ի ծրագրի հնարավոր կարգավորումներ, հաշվարկման հնարավորություններ, եռաչափ մոդելների արտահանում այլ ծրագրեր,
- 3DFlow ընկերության ֆոտոգրամետրիկ վերամշակման ծրագրի հետ ծանոթացում, պրակտիկ փորձեր,
- Վերոնշյալ ծրագրի հնարավորությունների կիրառում ընդերքի օգտագործման վերլուծության մեջ, ծավալների հաշվարկման հնարավորությունների դիտարկում, ֆիզիկական չափսերի, մոդելների արտահանում: ԱԹՍ-ներով նկարահանում գործող ավազի հանքում,
- ԱԹՍ-ներով նկարահանում նույն ավազի հանքը, մասնավորապես նախորդ նկարահանումից հետո քանդած և փորված վայրերը,
- Նախորդ թեմայի մշակում ծրագրով, պակասած ծավալների դիտարկում և վիզուալ համեմատում, հաշվարկներ,
- Ամփոփում հարցերի քննարկում, եռաչափ մոդելների և կետային ամպերի արտահանում:

ԲԸՏՄ կազմակերպվել և անցկացվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետների 4-րդ և 5-րդ կուրսերի 14 ուսանողի վեցշաբաթյա մասնագիտական պրակտիկա:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է անօդաչու թռչող սարքերի կիրառման համար անհրաժեշտ ծրագրերի (Օրթո և Լիդար) և վերլուծական գործիքների ուսուցում:

ԲԸՏՄ կարիքների համար օրենքով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում՝ 21,179,600 ՀՀ դրամ արժողությամբ ձեռք է բերվել հետևյալ ապրանքները.

Աղյուսակ 43

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը	Քանակը	Միավորի գինը /դրամ/	Ընդհանուր գումարը /հազ.դրամ/
	Վարչական սարքավորումներ			
1	Փոշու անալիզատոր	2	792,000.00	1,584.00
2	Գազանալիզատոր	1	399,998.00	400.00
3	Ջրի դաշտային անալիզատոր	1	2,474,604.00	2,474.60
4	անօդաչու թռչող համակարգերի մարտկոց	6	112,000.00	672.00
5	Հեռադիտակ	15	67,800.00	1,017.00
6	Ջրի նմուշառիչ	1	205,000.00	205.00
7	Ջրի հոսքի արագության հաշվիչ	1	1,528,000.00	1,528.00
8	անօդաչու թռչող համակարգ	1	3,699,000.00	3,699.00
9	Տեղորոշման սարք GPS	8	230,000.00	1,840.00
				13,419.60
	Այլ մեքենաներ և սարքավորումներ			
1	Զենք Սայգա	19	320,000.00	6,080.00
2	Զենք Բայկալ	14	120,000.00	1,680.00
				7,760.00

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2024 թվականին հայտարարված թափուր աշխատատեղերի վերաբերյալ 55 մրցույթային հայտարարություն, որից 38-ը քաղաքացիական ծառայության թափուր հաստիքների համալրման վերաբերյալ: Մրցույթային արդյունքների հիման վրա թվով 10 մասնակից նշանակվել է քաղաքացիական ծառայության պաշտոններում:

- Ծառայողական քննության արդյունքները ներկայացված են *Աղյուսակ 44-ում*

Աղյուսակ 44

Հ/Հ	Ժամանակահատված	Ծառայողական քննության արդյունքում կայացվել է որոշում	
		Կարգապահական խախտման առկայության մասին	Անհետևանք
1	2022	2	6
2	2023	9	7
3	2024*	29	26

*2024 թվականի ընթացքում նշանակվել է 8 ծառայողական քննություն ընդհանուր թվով 29 աշխատակցի նկատմամբ, որոնց արդյունքում 26 պաշտոնատար անձանց նկատմամբ նշանակված ծառայողական քննությունները թողնվել են անհետևանք, մեկ աշխատակցի նկատմամբ կիրառվել է նախազգուշացում, մեկ աշխատակցի նկատմամբ նկատողություն և մեկ աշխատակցի նկատմամբ խիստ նկատողություն կարգապահական տույժի տեսակները:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Աղյուսակ 45

ԲԸՏՄ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ				
1-ին եռամսյակ				
N	**ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ**	**ԱՄՍԱԹԻՎԸ**	**ԱՌԱՋԱՐԿԻ ԵԼԻՑ ՀԱՄԱՐԸ**	**ԱՌԱՋԱՐԿԻ ՔԱՆԱԿԸ**
1.	«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածներում փոփոխություններ նախաձեռնելու վերաբերյալ Օրենսդրական նախաձեռնություն	11.03.2024	01/29.6/6/1083-2024	1
2-րդ եռամսյակ				
2.	Վարչական իրավախախտումների կրկնակիության դեպքերը բացառելու նպատակով առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ	03. 06. 2024	01/29.6/6/3044-2024	2
3.	«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	05. 04. 2024	01/29.6/6/1886-2024	1
3-րդ եռամսյակ				
4.	ՀՀ կառավարության 14. 08. 2003 թ. -ի 14 N 1110-Ն որոշման մեջ և «Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու **օրենսդրական նախաձեռնություն**	01. 07. 2024	01/29.6/6/3517-2024	1
5.	«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ	25. 09. 2024	01/29.6/6/5749-2024	1

6.	«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ	25. 09. 2024	01/29.6/6/5705-2024	1
7.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ	23. 09. 2024	01/29.6/6/3883-2024	1
8.	Տեսչական մարմինների վերահսկողական գործառույթների շրջանակում վարչական իրավախախտումների կրկնակիության դեպքերի կապակցությամբ օրենսդրական առաջարկներ	23. 09. 2024	01/29.6/6/5719-2024	3
9.	«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	11. 07. 2024	01/29.6/6/3853-2024	1
10.	«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ	09. 07. 2024	01/29.6/6/3817-2024	1
11.	ՀՀ կառավարության 10. 10. 2019թ. -ի «ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1423-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու **օրենսդրական նախաձեռնություն**	04. 07. 2024	01/29.6/6/3517-2024	1
4-րդ եռամսյակ				
12.	«Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	14. 11. 2024	01/29.6/6/6948-2024	1

13.	Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ	06. 11. 2024	01/29.6/6/6678-2024	3
14.	«Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի	05. 11. 2024	01/29.6/6/6766-2024	2
15.	ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 2168-Ն որոշմամբ հաստատված՝ ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների (ներառյալ՝ որսի) տնօրինման կարգը նոր խմբագրությամբ շարադրելու առաջարկը:	30.12.2024	01/29.6/4/8226-2024	1

ԲՀՏՄ դեմ ներկայացված հայցադիմումների, դրանց վերաբերյալ պատասխանների, ԲՀՏՄ կողմից ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, ԲՀՏՄ մասնակցությամբ ընթացքի մեջ գտնվող և ավարտված դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն

- 2024 թվականի ընթացքում ԲՀՏՄ կողմից դատարան են ներկայացվել թվով 16 հայցադիմումներ՝ առգրավված առարկան (զենք, լողամիջոցներ և այլն) բռնագրավելու պահանջով: Տեսչական մարմնի կողմից 2023 թվականի ընթացքում ներկայացվել է թվով 13 հայցադիմում, 2022 թվականին՝ թվով 25 հայցադիմում:
- 2024 թվականի ընթացքում ընդդեմ ԲՀՏՄ ներկայացվել է թվով 196 հայցադիմում, 2023 թվականին ընթացքում՝ 81 հայցադիմում, 2022 թվականին՝ 23 հայցադիմում:
- 2024 թվականի ընթացքում ԲՀՏՄ կողմից ներկայացվել է 45 վերաքննիչ և 10 վճռաբեկ բողոք: 2023 թվականին ներկայացվել են թվով 29 վերաքննիչ և 8 վճռաբեկ բողոք: 2022 թվականի ընթացքում ներկայացվել են թվով 15 վերաքննիչ 2 վճռաբեկ բողոք:
- 2024 թվականի ընթացքում ներկայացվել են թվով 159 հայցադիմումի պատասխան և/կամ դիրքորոշում**:** 2023 թվականին ներկայացվել են թվով 95 դիրքորոշում և հայցադիմումի պատասխան: 2022 թվականին ներկայացվել են 35 հայցադիմումի պատասխան կամ դիրքորոշում:
- Ընթացքի մեջ են ընդհանուր առմամբ թվով 489 դատական գործեր:
- 2022 թվականի ընթացքում ԲՀՏՄ մասնակցությամբ դատական գործերով հօգուտ ԲՀՏՄ կայացվել են թվով 6 դատական ակտեր, ի վնաս ԲՀՏՄ՝ թվով 11 դատական ակտեր:

  2022 թվականի ընթացքում կայացված դատական ակտերի տոկոսային հարաբերակցությունը հետևյալն է՝

  հօգուտ տեսչական մարմնի՝ 35,29 %

  ի վնաս տեսչական մարմնի՝ 64,71 %

  2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացքի մեջ են եղել թվով 73 դատական գործեր:

- 2023 թվականի ընթացքում ԲԸՏՄ մասնակցությամբ դատական գործերով հօգուտ ԲԸՏՄ կայացվել են թվով 22 դատական ակտեր, ի վնաս ԲԸՏՄ՝ թվով 42 դատական ակտեր:

  2023 թվականի ընթացքում կայացված դատական ակտերի տոկոսային հարաբերակցությունը հետևյալն է՝

  հօգուտ տեսչական մարմնի՝ 34,38 %

  ի վնաս տեսչական մարմնի՝ 65,62 %

  2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացքի մեջ են եղել թվով 297 դատական գործեր:

- 2024 թվականի ընթացքում Տեսչական մարմնի մասնակցությամբ դատական գործերով հօգուտ տեսչական մարմնի կայացվել են թվով 69 դատական ակտեր, ի վնաս տեսչական մարմնի՝ թվով 56 դատական ակտեր:

  2024 թվականի ընթացքում կայացված դատական ակտերի տոկոսային հարաբերակցությունը հետևյալն է՝

  հօգուտ տեսչական մարմնի՝ 55,2 %

  ի վնաս տեսչական մարմնի՝ 44,8 %

  2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացքի մեջ են եղել թվով 489 դատական գործեր:

Դատական գործերի քանակը և աճը պայմանավորված է տեսչական մարմնի կողմից իրականացվող տարեկան պլանային ստուգումների քանակի ավելացումով և տարեկան ծրագրով չնախատեսված՝ արտածրագրային ստուգումներով և այլ վարչական վարույթներով: Միաժամանակ դատական գործերի ավելացումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ տեսչական մարմնի կողմից քննվող իրավախախտումների գործերով վերջին տարիներին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարված փոփոխություններով խստացվել են պատասխանատվության միջոցները՝ վարչական տույժի չափերը:

- 2024 թվականի ընթացքում ԲԸՏՄ պաշտոնատար անձանց կողմից կայացրած վարչական ակտերի, գործողությունների և անգործությունների դեմ բերվել է թվով 49 վերադաս բողոք: Նույն ժամանակահատվածում քննվել են թվով 52 վերադաս բողոքներ՝ որոնցից 31-ը մերժվել է, 2-ը բավարարվել է, 2-ը բավարարվել է մասնակի և 17-ը թողնվել է առանց քննության:
- ԲԸՏՄ ղեկավարի կողմից կայացվել է թվով 20 որոշում՝ նախկինում կայացված՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեության և գործողությունների կասեցումները դադարեցնելու վերաբերյալ:
- 2024 թվականի ընթացքում ընդունվել է ստուգում իրականացնելու մասին թվով 386 հանձնարարագիր:
- 2024 թվականի ընթացքում ընդունվել է դիտարկում իրականացնելու մասին թվով 37 հրաման:
- 2024 թվականի ընթացքում ԲԸՏՄ կողմից ընդունվել է թվով 146 հրաման, որից 137-ը անհատական բնույթի, 9-ը՝ լոկալ:
- Թվով 12 հրամանով աշխատակիցների նկատմամբ կիրառվել է խրախուսանքի միջոցներ:
- 2024 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացվել են թվով 401 հաղորդում: